


1126

2. V. 6

OLD
74
000
1



ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

[UNIVERSITÉ]

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

Բնութիւնը միշտ քանդող
Գիտութիւնը վերաշինող .
Այս վերջինին դիմելու է,
Առաջինին տիրելու համար :

ԱՌՄԱՋԻՆ ՇԻՋԱՆ

1899 — 1900 ՏԱՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐ, ԹԻՒ 1

ԽՄԲԱԳԻՐՆԵՐ

Մ. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ | ՅՈՎ. Հ. ՇԱԽԱՐԵ

ՓԱՐԻՉ

Directeurs : MISSAK BAGHDASSARIAN § HOVHANNÈS CHAVARCH

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Ի Ի Ն

| | |
|--|----|
| ՊԵՏԲԸ ԿԸ ԾՆԻ (Խմբագրութիւն) | 1 |
| ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՒՏ (Մ. Պաղտասարեան) | 6 |
| ՄԱՄՈՒԼԸ (Յովհ. Շաւարշ) | 11 |

ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

| | |
|---|----|
| — ՏԱՊԱՆԱԳԻՐՍ (Կորիւն Մկրտչեան) | 16 |
| — ԻՂՁՍ (Հրուշան) | 16 |
| ԳՐԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ (ՄՈԳ—ՊԵՏ) | 17 |
| ՀՆԷԱԲԱՆՈՒԹԻՒՆ (Գ. Մկրտիչեան) | 23 |
| ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ. — ՀԷՆԷՊԻՔ (Վ. Պէքեարեան) | 29 |
| ՓԱՐԻՉԻ ՃԱՐՏԱՐ. ԿԵԴՐ. ՎԱՐԺ. (Տ. Դիմաքսեան) | 31 |
| ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ՃԱՄԲՈՐԴԸ (« Մատո » Ի Յիշատակ) | 35 |

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ (Նշան)

| | |
|---|----|
| — Ա. ՀԵՂՈՒԿ ՕԴԸ | 38 |
| — Բ ԼԵՌՆԱՀԱՐՈՒԹԻՒՆ | 42 |
| — Գ ՄՈՒԿԵՐԸ ԿԸ ՏԱՐԱԾԵՆ ԺԱՆՏԱԽՏԸ | 48 |
| « ՀԱՄԱԼՍԱՐԱՆ » Ի ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ | 50 |

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

| | |
|--|----|
| — ԱՆԵՐԵՒՈՅԹ ՀՈՂԱԳՈՐԾ (Մ. Պ.) | 51 |
| — ԻԿՆԱՏԻՈՍ ԼՈՅՈԼԱ (Ս.) | 53 |
| — ԴՊՐԱՆՈՑԻՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ | 56 |
| ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ | 57 |
| ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆ (Խմբ.) | 58 |
| ՄՕՐ ՄԸ ՀԱԻԱՏԲԸ (Մոգ—Պետ) | 59 |
| ՅՐԱՆՍԵՐԷՆ ԼԵՉՈՒ—ՆՈՅՆԱՀՆՉԻՒՆ ԲԱՌԵՐ— | 62 |

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Շնորհակալութեամբ կը ծանուցանենք որ Բարձ. Իշ. Գ. Լուսինեան բարեհաճած է վեց ամիս եռետունական ֆրանք նուիրել շահարարանի հրատարակութեան նախնական ծախքերու մէջ, մեզ դիւրութիւն մը տալու համար։

Նուիրեց նաեւ մէկ տարեկան շահարարան, Կիպրոսի Նիքոսիա քաղաքին Հայոց Որբանոցին։

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐԱՊԵՏ

ՄԻՍՍԿ ՊԱՂՏԱՍՍՐԵԱՆ

Ա. Երզան

(1900 - 1901)

1 - 12 թիւեր

Փ Ա Ր Ի Զ

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ի ՏՊԱՐԱՆ

1901

HAMALSARAN

REVUE

SCIENTIFIQUE & LITTÉRAIRE

(Revue en Langue Arménienne)

Directeur - Rédacteur en Chef

MISSAK BAGHDASSARIAN

1^{re} ANNÉE

(1900 - 1901)

Nos 1 à 12

IMP. «HAMALSARAN». B. MISSAC - 4, RUE ORTOLAN, 4

PARIS

«ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»ԻՆ ԱՌԹԻԻ

Երբ այս ամսաթերթը հրատարակելու ձեռնարկեցինք ուրիշ որ եւ է նիւթական միջոց չունէինք, եթէ ոչ երկու ուսանողներու խիստ անձուկ պիւտձէն:

Մասնաւոր անհատներ չգտնուեցան որ մեզի լայն աշակցութիւն մը նուիրէին: Յիշենք սակայն որ Բարձր. Իշխան Գ. Լուսինեան «Համալսարան»ի սկզբնական ծախքերը դիւրացնելու համար վեց ամիս 30-ական Փր. նուիրեց. իսկ ծանօթ բարերար Պ. Ա. Մատուրեան իրեն բաժանորդագրութեան փոխարէն 75 Փր. մեզ զրկեց, որոնց կը կըրկնենք մեր ջերմագին շնորհակալութիւնները:

Այնպէս որ մեր սեպհական ոյժերով յաջողեցանք թէեւ «ընդմիջեալ» սակայն ամբողջապէս հրատարակել «Համալսարանի 12 թիւերը, ունենալով մեր մասնաւոր տառերը եւ վերջ ի վերջոյ մեր Տպարանը: Մեր յաջողութիւնը, — որ կը կայանայ լոկ մեր սիրելի հայ երիտասարդներուն ու ինքնագարգացումով զբաղողներու օգտակար ըլլալու բաղձանքին մէջ, — իր ապահով երեւոյթները կը ստանար, այն պահուն երբ սիրելի Ընկերս, ՅՈՎՀ. ՇԱԻԱՐՇ ծանր թոքախտով մը Փարիզը կը թողուր ու Ալճէրիայի մէջ անսպասելի կերպով, կը հեռանար այս կեանքէն:

Կորուստը մեծ էր՝ եթէ ո՛չ այնքան նիւթական բայց բոլորովին բարոյապէս՝ հզօր խանդով մը սկսուած այս ձեռնարկին մէջ: Մնացած մինակ, սակայն չլարանեցայ բնաւ, հակառակ ստանձնուած գործին ծանրանուր պահանջումներուն, զայն առաջ մղել չդեղեւելով որ եւ է խոչընդոտի, որ եւ է զոհողութեան առջեւ:

Հիմնելով Փարիզի մէջ միակ Հայկական Տպարանը, — սպասելով բնականաբար ծանօթ ու անծանօթ յաջողութիւններու զայն առաջնակարգ հաստատութիւն մը դարձնելու, — փափաքեցայ դիւրութիւնը ընծայել Փարիզի նման հետզհետէ կարեւորութիւն ստացող հայ կեդրոնի մը մէջ,

հոն ուռճացող մեր ազգային մտաւորական կեանքի յորդանքներուն, ու կը տեսնեմ՝ աչքի առջեւ ունենալով այն կարգ մը հրատարակութիւնները որոնք լոյս տեսնել սկըսած են մեր հաստատութենէն, թէ ծրագիրս անվրէպ ճշտութեամբ մը մտաախպարած եմ:

Այսպէս՝ մէկ կողմէ նոր ձեռնարկի մը՝ օգտարար ձեռնարկի մը ինձ պատճառած ծանրութիւնը, միւս կողմէ ընկերոջս յանկարծակի մահուամբ առանձին մնալս եւ երրորդ կողմէ մը ուսումներուս շարունակութիւնը ինձ կը սփայեն, խնդրել իմ սիրելի «Համալսարան»իս ազնիւ ընթերցողներէն, որ ինձ շնորհեն մէկ քանի ամսուան արձակուրդ մը, խոստանալով ասոր փոխարէն Բ. Շրջանին «Համալսարան»ը դարձնել աւելի ճոխ, զայն զարգարելով բազմակողմանի նիւթերով:

Այս առթիւ կը խնդրենք մեր ազնիւ Բաժանորդներէն որ հաճին մեզ իմացնել իրենց բաժանորդագրութեան, այո՛ կամ ո՛չ շարունակութիւնը Բ. Շրջանին համար:

Պիտի խնդրէինք այս առթիւ նաեւ մեր Պատ. Մամուլի ներկայացուցիչներէն որ հաճէին համառօտակի այս որոշումը հրատարակել իրենց թերթերուն մէջ, պահելով մեզ անշուշտ այն տաք համակրութիւնը՝ որով ողջունեցին «Համալսարան»ի երեւումը:

ՄԻՍՍԿ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

Ծանօթ. — «Համալսարան»ի Բ. Շրջանին սկզբնաւորութեան թուականը մասնաւոր շրջաբերականով պիտի յայտարարուի ինչպէս մեր գործակալներուն, մամուլին, նմանապէս բաժանորդագրուելու կանխաւ բաղձանք յայտնողներուն:

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

1899—1900 ՏԱՐԻ

ՊԵՏՔԸ ԿԸ ԾՆԻ

Հանսպարանի դերը. — Գիտական եւ Գրական ուղղութիւն. —
Իր միջոցներն ու վերջնական ծրագիրը:

Հանսպարանի ուղղութիւնը՝ մինչեւ հիմա պարբերաբար երեւցած թերթերու ուղղութիւնէն տարբեր պիտի լինի եւ նոր:

Ան կը ծնի խոշոր՝ բայց բոլորովին անտեսուած պէտքէ մը, բազմակողմանի եւ ընդհանուր:

Անկարելի պիտի լինի պատկերացնել այստեղ, անոր կատարելիք դերը, իր ամբողջ մանրամասնութիւններով: Սակայն օգտակարութենէ զուրկ չէ, ընդհանուր գիծերով, փոքրիկ զաղափար մը տալ այդ մասին:

Հանսպարան պիտի ջանայ հայ ժողովրդի կրթու-

թեան գործին մէջ ընդհանուր դեր մը ստանձնել. բնական է որ շատ յանդուգն քայլ մ'է իր ըրածը. որովհետեւ իր վրայ ծանրացող պարտականութեան մեծութիւնը՝ անհամեմատելի է, բացարձակապէս, իր տրամադրած միջոցներու անբաւականութեան հետ: Սակայն բարի կամեցողութիւնը եւ հաստատուն կամքը, գործունէութեան մը մէջ, աւելի օգտակար կը լինին, քան «չենք կրնար շատը ձեռք բերել՝ քիչէն ալ հրաժարինքի» խուսափող գրութիւնը. ան լաւ կը համարէ զօրաւոր կամքով եւ վճռական կերպով առաջին նշանաբանին հետեւիլ, քան երկրորդին որ կը բուրէ թուլութիւն եւ վհատութիւն:

Գիտութիւններն անմատչելի չեն անմշակ մտքերու, ան համոզուած է այդ մասին. որովհետեւ անոնց գիւտերը, ճշմարտութիւնները՝ իրենց անսպառելի առատ արտադրութեան հետ, կ'արթնցնեն մտքերու ամենէ թմրածներն իսկ, զանոնք շահագրգռելով եւ մղելով որ խորհին, մտածեն:

Գիտութիւնն է որ կը պաշարէ, կը դիւթէ աչք ու ականջ, միտք եւ հոգի, իր յարածուն հրաշալիքներով. կը ընու քաղաքները, կ'երթայ՝ կը գտնէ գիւղացին իր գաշտին անկիւնը՝ դնելով անոր առջեւ ելեքտրականութեան, չողիին սքանչելի արդիւնքները, ու անոր մէջ անհնարին տեսչ մը կը ծնուցանէ՝ անոնց գաղտնիքներուն թափանցելու: Դաշտային աշխատութիւնները գիւրացնելու գործիներ կուտայ իրեն, նորանոր աղբերու տեսակներ կը հնարէ եւ իր հունձքերը աղէտքներէ պահպանելու զէնքերը կը դնէ անոր ձեռքերուն մէջ: Բնութիւնը միշտ քանդող, գիտութիւնը վերաշինող, այս վերջինին գիմելու է՝ առաջինին տիրելու համար:

Մէկ կողմանէ յառաջացած հասակի մը մէջ տգիտութիւնը խարազանել, միւս կողմանէ նոր սերունդն անոր ճիրաններէն փրկել. ահա՛ գիտութիւններու մէջ Հառնալաւրանի բռնելիք գլխաւոր ուղին:

Գիտական դասընթացներով պիտի զարգանան հետըհետէ նորահասները, աստիճանաբար հասկնալով բնական ոյժերու կարեւորութիւնն ու դերը ամեն տեսակ աշխա-

տուժիւններու մէջ: Գործաւորը, երբեմն, կենդանի մեքենան էր, այսօր՝ անոր վարիչն ու կանոնաւորողն ըլլալու կոչուած է: Պէ՛տք է վերջապէս թողուլ որ ամբողջ ժողովուրդ մը, ընդհանուր յառաջագիմուժեան մէջ, կատարելապէս տգէտ մնայ: Չի ճանչնար այն հողը՝ որուն վրայ կ'ապրի, այն բոյսերը որ զինքը կը սնուցանեն, այն կենդանիները որ իրեն կը ծառային, այն մթնոլորտական երեւոյթները որ զինքը կը շրջապատեն եւ յաճախ կը սարսափեցնեն. մինչ այս բոլորը, դիւրըմբռնելի ծանօթութիւններ, այնքա՛ն լայնօրէն պիտի նպաստեն իրեն բարեկեցութեան եւ երջանկութեան:

Չարգացնել միտքը գրական պաշարով մը, Հաւախարանի ծրագրին կարեւոր մէկ մասն է: Այդ գործին մէջ ալ յաջողելու համար, ան պիտի գիմէ մանկավարժական լաւագոյն մեթոտներու. մեթոտներ՝ որոնց ամբողջութիւնը նշանաբաններու, պատուէրներու հնչուն եւ սնամէջ գէզ մը չպիտի կազմէ: Օրինակներով եւ շօշափելի փաստերով պարզել նիւթը, ու ջանալ ապա տեսականը անկից արտաբերել, մեթոտը գտնել, ահաւասիկ միակ միջոցը լաւագոյն գրական կրթութեան մը, որուն Հաւախարան պիտի հետեւի եւ որուն պէտք է հետեւին, անխուսաբար, ամեն անոնք, որ լաւ ըմբռնած են ծանօթեմ' անծանօթը, շօշափելիեմ' վերացականն անցնելու սկզբունքը: Գրականութեան մէջ տեսականօրէն ու վարդապետականօրէն պարզուած մեթոտներ ունին միշտ տեսակ մը անմատչելի երեւոյթ, մի՛շտ խորհրդաւոր, մի՛շտ խորհեցուցիչ. մինչդեռ իրականութենէն քաղուած եւ հետեւցուած այն գրութիւններէն որոնց յենարանը կը կազմեն, անոնք աւելի լաւ կը հասկցուին եւ կը մարտունին դիւրութեամբ: Այդ մեթոտները լինելով ընդմիշտ միեւնոյնը, հակառակ առարկաներու եւ նիւթերու անհուն զանազանութեան, կարելի կը լինի վերջապէս անոնց պարզութիւնը ճանչնալ, եւ համոզուել թէ ո՛չ կնճռոտ են եւ ո՛չ դժուարըմբռնելի, ինչ որ նախապէս կը թուէին, երբ վերացական ձեւին եւ տեսական առանձնութեան մէջ կը գտնուէին:

Որչափ ալ միտքն անընդունակ ըլլայ՝ այս տեսակ մեթոտի մը առջեւ պիտի տեղի աայ ու արտագրէ: Պարզ եւ կոկիկ կանոններ, որոնց գիւտը դասընթացքներու շարքով մը պիտի պատկերացնենք մեր ընթերցողներու աչքին առջեւ, միշտ օրինակէն հետեւցնելով, պիտի քանդակուին յիշողութեան մէջ. որովհետեւ օրինակ եւ մեթոտ, հաւասար աստիճաններով ցոյց տրուած՝ ամբողջութիւն մը պիտի կազմեն միայն՝ իրարմէ անբաժան:

Ու ահա այսպէս վարժապետը՝ Հաւնայտարանի մէջ, իր աշակերտներու կրթութեան համար որոշ ուղղութիւն մը պիտի գտնէ, ու ինքնազարգացումով պարապողն ոչ նուազ առատ նիւթ որոճալու: Չենք շեշտեր գրականութեան կարեւորութեան վրայ, որովհետեւ այնքան բացորոշ է ատիկա, որ կապ ունի այն առաջին բառին հետ որ բերնէն կը թռչի, խօսքին հետ որ կը կազմուի, գաղափարին հետ որ կ'արտայայտուի եւ վերջապէս զգացումին հետ որ կը թարգմանուի: Աւելցնենք որ այս տեսակ ուղղութեան մը պակասը զգալի է մեր վարժարաններու մէջ, անխուսափելի պէտք մը գոր հարկ է հոգալ. Հաւնայտարան՝ իր ոյժերու ներածին չափ, այդ աշխատանքին մէջ ալ պիտի մտնէ:

*
*

Հաւնայտարան այս արդիւնքները ձեռք բերելու համար՝ թէ ի՞նչ միջոցներու գիմել խորհած է, ու ատոնք մինչեւ ո՞ր աստիճան իր հասողութեան մէջ կը գտնուին, կը փութանք, անկեղծօրէն եւ առանց յաւակնոտութեան, զանոնք պարզել:

Դիտական, գրական ու արհեստական պարբերական յոդուածներ պիտի հրատարակի. — Այս բաժինին մէջ, բացի ինքնուրոյն գրուածքներէ, ան իւրաքանչիւր ամիս, տեսութիւն մը պիտի ընէ՝ ինչպէս օտար (մանաւանդ ֆրանսական) նոյնպէս ալ հայ պարբերական եւ օրական թերթերու վրայ. ու հակիրճ եւ հասկանալի ոճով՝ օրուան նորութիւններու վրայ կոկիկ հաւաքածոյ մը պիտի պատրաստէ:

Գաւրնըսցֆներու շարունակելի շարք մը պիտի պարունակի . — Ամէն խնամք չպիտի զլացուին , որչափ որ Հաւնայարանի խմբագիրներու եւ աշխատակիցներու մը-տաւորական ոյժերը կը ներկն , այդ գասընթացքները գեղեցիկ կերպով մը պատրաստելու : Այս բանին համար , պիտի օգտուինք՝ եւրոպական լաւագոյն մեթոտներէ եւ հրատարակութիւններէ , ու առանց մեքենայ հետեւող մ'ըլլալու անոնց , պիտի գծենք մեր ժողովուրդի ձգտումներու եւ զարգացման աստիճանի յարմարցուած կրթութեան շաւիղ մը : — Գաւրնթացքները , գրականէն աւելի գիտական մասը , հասկանալի եւ բեղմնաւոր լինելու համար կը կարօտին նկարներու , որոնց պահանջած մեծ զոհողութիւններու առջեւ Հաւնայարան չպիտի գեղեւի երբէք՝ եթէ իր ընթերցողներու յարածուն թիւը եւ համակիրներու աջակցութիւնը գործնականապէս իրականացում գտնեն :

Վերջապէս Հաւնայարանի նպատակը լինելով տարածել եւ ժողովրդականացնել գիտութիւնը , իր վերջնական եւ որոշ ճրագիրն ու ուղղութիւնը պիտի ծնին ժողովուրդին այդ օրինակ պէտքերէն ու պահանջներէն :

Վերջացնելէ առաջ , մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք հրապարակաւ այն համակրական ցոյցերուն , որ կ'արտայայտուին նամակներով ամեն կողմանէ : Այդ բարոյական քաջալերին մէջ Հաւնայարան զգալով իր ապագայ եւ գործնական զօրավիզը , ոգի ի թոխն պիտի ճզնի , իրմէ սպասուածն արգարացնելու :

Պատք եւ Իրաւունք փոխադարձ են — , այդ նշանաբանին ըմբռնումէն եւ գործադրումէն կախուած են միայն , հասարակային օգտակարութիւն ունեցող գործերու յաջողութիւնը :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻՍԱԲ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ

ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԻՒՏ

ՏԱՍՆԵՒԻՆՆԵՐՈՐԴ ԳԱՐՈՒ ՄԷՋ

Ա. Գիտութիւններն սնցեալին եւ ներկայիս մեջ. — Բնական եւ Բնապատմական գիտութիւններ. — Գիտութիւններու առընչութիւնը: Բ. Հեռագիր. — Հեռախօս. — Ռեկդիկեանն անուագայքներ ու իրենց մասուցած ծառայութիւնն արհեստներու մեջ: Գ. Ասեղիչիւն. — Սիւնեւադիրափ: Դ. Բասդիտ, Բժշկութիւն ու Մանրակենդանիներ. — Կասաղութիւն, Ածխախտ, Տիֆոէրի:

Ա.

Գիտութիւնը, ներկայ դարուս մէջ, այնքան յառաջագիծութիւն ըրած է, որքան չէր ըրած հարիւրաւոր դարերէ ի վեր: Մեր նախահայրերու անորոշ ըմբռնումները իրենց իսկական գոյնն ու արժէքն ստացան հոն. ու, այս արագընդոտ յառաջացումին մէջ, ան, ինկած իր բնական ճամբան եւ ամրացած իր սեպհական հիմերու վրայ, կը վերստղանէ ապագայ սերունդներու աւելի բազմակողմանի եւ աւելի ընդհանուր բարիքներ. որոնցմէ, եթէ մաս սը չզլացաւ այս դարու մարդկութեան, զրկեց բոլորովին, անողոք կերպով, մեր նախահայրերը:

Բնութեան շատ մը ոյժերը, ինչպէս միշտ, իրենց ներկայութիւնը կը մասնէին իր մթնոլորտական ու ուրիշ երեւոյթներու մէջ. սակայն այդ խորհրդաւոր երեւումով, իրենց հանդիսատեսներու վրայ անցողակի սպաւորութիւն

մձ կը թողուին : Դիտող աչքը, գիտական միտքը, միշտ հետաքրքիր եւ հետեւող թէեւ, երկար ժամանակի եւ դարերու աջակցութեան կարօտեցաւ, իր տգիտութեան վարագոյրը պատռելու եւ յաջողիլ սանձել՝ սանձահարելու, նախապէս, այդքան անհասանելի գաղտնիքները :

Բնական գիտութիւնները (սիւնս ֆիզիք) մեծ ծառայութիւն մատուցին արհեստներու զարգացումին, հաղորդակցութիւններու դիւրացումին եւ, առհասարակ, ընկերական եւ տնտեսական պայմաններու բարւոքումին մէջ :

Բնապատմական գիտութիւնները (սիւնս նագիւրէլ) ծանօթացնելով մարդոց բուսական աշխարհը, անոր անհատներու (բոյսերու) բազմանալուն նորանոր միջոցները ցոյց տուին . ու ծանօթէն անծանօթը գիմող միտքը, կարողացաւ գտնել թէ բուսական աշխարհը ի՛նչ առընչութիւններ ունէր կենդանական աշխարհին հետ . ու ո՛չ միայն ջանաց որ այս վերջինն անկից օգտուի, սննդառական տեսակէտով, այլեւ անոր տարրերը կազմող մանրաբոյսերը (պագրէրի) քննելով՝ անոնց աւերիչ եւ վարակիչ դերը յայտարարեց մարդկութեան դէմ :

Բնութիւնը, ինքնին, առեղծուած մը լինելով, զայն լուծելու համար պէտք էր անոր բանալին գտնել . ու ահա՛, այսօր, ան կը լուծուի գիտութեամբ, կը բանայ հետզհետէ իր ծոցը մեր առջեւ, ուր, պահ մ'առաջ, խաւար եւ մթութիւն միայն կը տեսնէինք : Գիտութիւնները, առհասարակ, համերաշխ բնութեան հետ, միակութիւն մը կը ներկայացնեն . ու իրարու վրայ փոխազարձաբար կիրարկուելով եւ զիրար ամբողջացնելով, կը լուծուին, ու, հետեւաբար, կը լուծեն բնութեան առեղծուածը : — Բնապատմական գիտութիւններու գտած վարակիչ մակաբոյժն իր գոյութիւնը մատնեց բնական գիտութիւններու մանրագիտակին մէջ . ու քիմիաբանութեան տարրերը, իրենց բազմազան յատկութիւններով, եւ տարբալուծմն իր օրէնքներով, հաստատեցին կենդանական Բնախօսութեան հիմերը : Ահա այսպէս՝ սարդկային ցեղը, բնութեան անհուն ծոցին մէջ, երբեմն շուարած եւ շփոթած, գտաւ հետզհետէ իր բարւո-

քուսմին ուղին, ուր կը շարունակէ ու պիտի շարունակէ անընդհատ :

Գիտութիւններու օգտակարութեան վրայ արդէն ծանրացած լինելով, Համալսարանի խմբագրականին մէջ, կ'անցնինք անմիջապէս թուել նորագոյն մի քանի գիտեր, որ ներկայ դարու փառքն եղան եւ իրենց հնարիչներու անունը հռչակեցին :

Բ

Ելեքտրականութիւնն իր զանազան կիրարկութիւններով, ընկերական կեանքի մէջ, բարիքներու պարիկ մը դարձաւ :

1811-ին արդէն հեռագիրը գիտական հողին վրայ ոտք կը դնէր եւ, 1840-ին՝ իր կատարելութեան կը հասնէր :

Հեռագրութեան ամբողջ դրութիւնը, որուն առաջին գաղափարը Ալքէր յղացաւ, կը կայանայ այն յատկութեան մէջ, որով ելեքտրամագնիս մը կ'ստանայ կամ կը կորսնցնէ իր մագնիսական ոյժը՝ երբ հաղորդակցութեան կը գրուի ելեքտրական հոսանքի մը հետ եւ կամ հաղորդակցութենէ կը դադարի : Այդ ելեքտրամագնիսը կրնանք զետեղել որ եւ է տեղ ու գայն կապել, մետաղէ հաղորդիչ թելով մը, ելեքտրական հոսանքն արտադրող մեքենային հետ, որ կը գտնուի, օրինակի համար, հարիւրաւոր մղոններ հեռու, ուրիշ վայրի մը մէջ : Ելեքտրամագնիսը, որ կը բաղկանայ կակուղ երկաթի կտորէ մը՝ որուն վրայ փաթթուած է մետաքսապատ պղնձէ երկար բարակ թել մը, իր կարգին կապուած է ելեքտրական հոսանքը բերող թելին հետ : Կակուղ երկաթի կտորին առջեւ զետեղուած է, գրչածայրի ձեւով վերջացած, մետաղէ բարակ ձող մը . երբ ելեքտրական հոսանքը կ'արտադրուի, երկաթի կտորը անոր ազդեցութեան տակ, կը մագնիսանայ ու իրեն կը քաշէ իր առջեւի ձողը . իսկ երբ, ընդհակառակը, հոսանքը գաղբի, երկաթն իր մագնիսական ոյժը կը կորսնցնէ եւ, հետեւաբար, այդ դրութեամբ միայն իրեն ձգած ձողն

իրմէ կը հեռանայ: Այնպէս որ ձողը՝ փոխադարձաբար հեռանալով եւ մտնենալով ելեքտրամագնիսին, ծայրովը կը գծէ իր առջեւ մեքենական շարժումով պարձող թղթէ շերտի մը վրայ երկար ու կարճ գծերով՝ իր մէջէն անցնող ելեքտրական հոսանքին իւրաքանչիւր ընդմիջումի տեղողութեան համեմատ: Այս գծերը հեռագրութեան նշանատառերը կը կազմեն, զոր պաշտօնեան կը թարգմանէ ու իր հասցէին կ'ուղարկէ:

1875-ին ելեքտրական ուրիշ գիւտ մը իր հնարիչին անունն անմահացուց: Ամերիկացի (Պոսթոն) Կրահամ Պէլ գտաւ Հեռախօսը [Թէլէֆոն], որուն գործածումը կայծակի արագութեամբ սարածուեցաւ քաղաքակիրթ երկիրներու մէջ:

Հեռախօսին սկզբունքը շատ պարզ է. երեւակայեցէք մագնիսի պարզ կտոր մը, որուն վրայ օղակաձեւ պլլուած լինի երկաթի թել մը: Այս վերջինին կապուած է ուրիշ հաղորդիչ թել մը, որ, իր կարգին, կը կապուի նոյնօրինակ մագնիսի մը շուրջն օղակաձեւ պատաստուած երրորդ թելի մը: Այս վերջին մագնիսն ու իր թելը յար եւ նըման են թէ՛ շինուածքով եւ թէ՛ բնութեամբ առաջիններուն. ու այս երկու գործիքները կրնան իրարմէ մէնչեւ 250 քիլոմեթր հեռու վայրերու մէջ դուրի: Մագնիսներուն առջեւ, առանց հպելու, զետեղուած են երկաթէ թերթիկներ. երբ խօսուի ասոնց մէկին առջեւ, ան, ձայնի ազտեցութեան տակ, տատանիլ կ'սկսի, ու իր շարժումները կը հաղորդուին անմիջապէս մագնիսին՝ որու մագնիսական ոյժը իր կարգին կը թրթռայ ու կը փոխանցուի, հաղորդիչ թելին միջոցով՝ այս վերջինին միւս ծայրը գտնուող մագնիսին. այնպէս որ ասոր ալ առջեւի երկաթէ թերթիկը թրթռալ սկսելով՝ կը վերաբողբէ ճիշտ ու ճիշտ ձայնին արտադրած թրթռումներն եւ հետեւաբար հեռուէն խօսուած բաները: Այս գործիքներէն մէկը իր ականջին դնելով՝ մարդ լաւապէս կը հասկնայ իր խօսակցին ըսածներն ու, իր կարգին, փոխադարձաբար, իր ըսելիքներն անոր կը հաղորդէ:

Քանի մը տարի առաջ, 1896-ին, ելեքտրական ուրիշ նոր գիւտ մը ոչ նուազ իրարանցում առաջ բերաւ գիտական աշխարհին մէջ: Բրոֆէսէօր Ռէնզղէն, Վիւրձպուրկի մէջ, գտաւ ելեքտրական ճառագայթներ, որոնց յատկութիւններու վրայ որոշ գաղափար մը չունենալուն, անոնց անծանօթ [բէյոն իքս] անունը տուաւ: Այդ ճառագայթները կը գոյանան, երբ Ռիւմքօրֆի մեքենային հոսանքին կայծերն՝ օդէ զուրկ, դասարկ, ապակեայ խողովակի մը մէջ արտադրենք:

Այս ճառագայթներու գլխաւոր յատկութիւնն է թափանցել ինչ ինչ թանձր մարմիններ եւ լուսանկարի զգայուն ապակիին վրայ՝ այդ մարմիններու անթափանց տպաւորութիւնները միայն թողուլ. մէկ խօսքով շրտանկարն անձնանկարն: Իրօք, այս մեթոտով, կարելի է լուսանկարել մարդուն ոսկորները, որոշ թանձրութեան մը տակ մետաղները, դրամները, կաւիճը կամ կաւային մարմինները եւ այլն: Կենդանիներու մսային մասն անծանօթ ճառագայթներէն թափանցելի լինելով, կրնանք նկարել միայն անոնց կմախքները. օրինակ՝ երբ մարդ մը այդ ճառագայթներուն առջեւ կենայ կը տեսնենք անոր ոսկորները, կմախքը միայն, ծրագրուած մսին թափանցիկ թեթեւ ստուերովը:

Ահա այսպէս, վիրաբուժը կրնայ այլեւս դիւրութեամբ գտնել, մարդու մը ոսկորներու վնասուած մասերը, անոր դնդերներու [միւսդլ] մէջ թաղուած հրացանի դնդակին իսկական տեղը եւայլն: Ակնավաճառները եւս ոչ նուազ օգտուեցան այս գիւտէն. որովհետեւ ճշմարիտ աղամանդն ու կեղծը միեւնոյն հետքերը չեն թողուր լուսանկարի զգայուն ապակիին վրայ, երբ անծանօթ ճառագայթներու պղծեցութեան ենթարկուին. ճշմարիտը թափանցելի լինելով անոնցմէ՝ բոլորովին թեթեւ հետք մը կը թողու հոն, մինչդեռ կեղծն իր սեւ եւ որոշ օրպը [*]:

[*] Այս յօդուածին Գ եւ Դ մասերու վրայ պիտի խօսուի յառաջիկայ թիւին մէջ:

Մ Ա Մ ՈՒ Լ Ը

Մաւնոյի դերը. — Իր օգուսներն ու վնասները՝ արքեր պայ-
ւաններու մեջ. — Մաւնոյը չեզոքացնելու միջոցները :

Գրական հրագրարակի վրայ եւ լրագրութեան սիւնակ-
ներու մէջ ահագին վիճաբանութիւններ տեղի ունեցած
են, ու դեռ կ'ուսնենան անընդհատ, որոշակի պարզաբա-
նելու մամուլի անվիճելի բարձր դերը՝ ազգի մը մտաւոր
յառաջադիմութեան մէջ, մասնաւորաբար, եւ ժողովուրդ-
ներու բարոյական մերձեցումին համար՝ ընդհանրապէս :

Ուստի, առանց երկար բացատրութիւններու մէջ
նստնելու, կարելի է ըսել մէկ բառով՝ թէ մամուլը ժողո-
վուրդի դպրոցն է : Յայտնի է որ մանուկը, իր ամենա-
պզտիկ հասակէն սկսած, պէտք ունի ուսումնարան յաճա-
խելու, որպէսզի կարենայ ամբարել կարգ մը օգտակար ու-
սումներ ու գիտութիւններ, որ անհրաժեշտ պէտք պի-
տի դառնան իրեն, ապագային, կեանքի տեւողութեան
մէջ : Նոյնպէս ալ ժողովուրդ մը, որ կազմուած է անհատ-
ներէ, կամ աւելի ճիշտ, հասակաւոր մանուկներէ, պէտք
ունի դպրոցի մը, որ՝ դիւրամտացիլի եւ հնարաւոր պայ-
մաններու տակ, մատակարարէ իրեն միջոց եւ դիւրութիւն՝
բարոյապէս ու նիւթապէս օգտուելու համար գիտութեան
անոպառ աղբիւրներէն, առանց երբեք վնասելու իր աշ-
խարհային ու նիւթական զբաղումներուն : Այդ դպրոցն է
մամուլը : Ուրեմն, ինչպէս որ դպրոցը կարեւոր է մանու-
կին միտքը հասունցնելու եւ սիրտը կրթելու համար,
նոյնպէս ալ, եւ աւելի զօրաւոր պատճառներով, մամուլի

գոյութիւնն անվիճելի կերպով պիտանի է ժողովուրդի մը զարգացումի տեսակէտով : Մանաւանդ երբ նկատի առնենք ներկայ դարուս պահանջները, պիտի համոզուինք որ մամուլը նոյն իսկ անհրաժեշտ պէտք մըն է, առաջնորդելու անհատներն ընկերական ու տոհմային կեանքի մէջ եւ կարելի եղածին չափ դիւրացնելու՝ անոնց ապրելու էական պայմանները, որոնք, առանց մամուլի բարերար օժանդակութեան, շատ աւելի դժնդակ պիտի լինէին տգէտ ժողովուրդի մը համար :

Դարձեալ, մամուլը կը դառնայ ընդհանուր կապ մը, աւելի ճիշտ կը լինէր ըսել, հոծ ու լայնատարած ցանց մը, որ իրարու կը միացնէ, ամենասերտ կապերով, ժողովուրդի մը անհատներն ու մշտական յարաբերութեան մէջ կը գնէ զանոնք. յարաբերութիւն՝ որ սակայն նուազ չի նպաստեր յառաջադիմութեան գործին :

Բայց այսչափը բաւական չէ : Դեռ աւելին կայ : Մամուլը ժողովուրդին արտայայտիչ գործի՞ն է. հոն է որ երեւան կ'իշխեն անոր ընդհանուր կարծիքն ու փափաքը՝ այս ինչ կայ այն ինչ խնդիրի առիթով : (*)

Ուրեմն մամուլը հոս կը ներկայանայ մեր առջեւ իբրեւ ելեքտրական զօրաւոր մեքենայ մը, որ իւր բիւրաւորութեւրով ամէն կողմ կցուած է ժողովուրդին հետ. երբ շարժումի մէջ կը դրուի մեքենան, իր ներգործութիւնն անմիջական կը լինի ամէն տեղ, հոն ուր ճիւղեր ձգած է, ու ազդեցութիւնը՝ ցնցող :

(*) Այստեղ ժողովուրդը ըսելով՝ պէտք չէ հասկնալ անշուշտ այն խաւարի մէջ մոռցուած դասակարգերը, — դժբախտաբար մեծամասնութիւն մեր մէջ, — որոնք ո'չ միայն գաղափար չունին մամուլի վրայ, այլ նոյն իսկ իրենց գոյութեան անգիտակից՝ թաղուած կը մնան միշտ տգիտութեան մէջ, եւ, հետեւաբար, ո'չ մի ձայն եւ ազդեցութիւն կարող են ունենալ մամուլի վրայ. այլ այն դասակարգերը որոնք եթէ վարիչներ չեն, գէթ լրագիր կը կարգան ու կը հետաքրքրուին ընկերական կեանքով, ու ի հարկին նոյն իսկ իրենց աջակցութիւնը չեն խնայիր՝ ճշմարիտն ու օգտակարը պաշտպանելու համար :

Այս առիթով եթէ քննենք եւրոպական մամուլը, պիտի տեսնենք որ ան ամենամեծ գերը կը խաղայ, ո՛չ միայն իբրեւ կրթիչ ու հրահանգիչ, այլ եւ իբրեւ հզօր պաշտպան տոնմային ու ընկերական շահերու եւ առաջնորդ ու ղեկավար՝ հանրային ու պետական վարչութիւններու:

Հիմա կը մնայ մեզ իմանալ՝ թէ մամուլը ո՛ր ստտի-
ճան կընայ գործնականապէս օգտակար լինել ժողովուրդի մը: Այդ բանը կախում ունի անշուշտ, նախ՝ ժողովուրդի զարգացումի վիճակէն, երկրորդ՝ մամուլի վայելած ան-
կախութեան սահմանէն եւ երրորդ՝ մամուլին վարիչ մար-
միներէն: Նոյնպէս, իբրեւ պայման պէտք է ընդու-
նիլ՝ թէ մամուլը որչափ ալ լաւ կազմակերպուած լինի, որչափ ալ հմուտ ու գործունեայ վարիչներու ձեռք լինի, չպիտի կրնայ, ապահովաբար, տալ այն ցանկալի օգտա-
կար արդիւնքը ժողովուրդի մը մէջ, որ ղեռ միաքով խաղ է եւ չի կրնար ըմբռնել իրեն աւանդուած իրերու բարձ-
րութիւնն ու արժէքը. որովհետեւ տգէտ ժողովուրդի մը տեսական բարձր գիտիւթիւններու վրայ ճառելը՝ կը նը-
մանի կեղեւը չհանած կաղին մը գնելու փոքրիկ երախայի մը բերանը, որուն ակռաները դեռ չեն բուսած, եւ ստի-
պել զայն որ կտտրէ կեղեւը՝ միջուկն ուտելու համար: Եւ, կարծեմ թէ, այս պարագային տակ, նոյն խաղ վնաս-
տակար կը հանդիսանայ մամուլը՝ տգէտ ժողովուրդի մը, ինչպէս որ կաղինի կարծր կեղեւը պիտի ցաւցնէր երա-
խային բերանը: Այս չարիքին առաջն առնելու համար, քանի որ գործ պիտի ունենանք ղեռ իր վիճակին անգիտակ տարրի մը հետ, այնպիսի կազմակերպութիւն մը պէտք է տալ մամուլին, որ ղիւրամատչելի լինի մեծամասնութեան, եւ ամէն նիւթ առհասարակ մարտուի անզարգացածներէն ալ, ինչպէս որ կաղինը կարելի է վերածել այնպիսի վիճակի մը որ երախան, փոխանակ անկէ խորշելու, տխորժակով ճաշակէ զայն:

Ուրեհն մամուլը մեր մէջ հանրութեան օգտակար ընե-
լու անհրաժեշտ էական պայմանն է, բովանդակել զայն ժողովուրդին աւելի ծանօթ նիւթերով, ռամիկ դասակար-

գին առօրեայ պէտքերը շօշափող խնդիրներով եւ, որ աւելի կարեւորն է, գրել պարզ ու դերահասականալի լեզուով, այսինքն՝ ժողովուրդին հարազատ լեզուով :

Մամուլի օգտակարութեան աստիճանը կարելի է չափել նոյնպէս, նկատի ունենալով անոր վայելած անկախ ոգին ու վարչութեան եղանակը : Եթէ մամուլի վարչութիւնը յանձնուած է մտաւորապէս հմուտ, կարող ու ձեռընհաս անձնաւորութիւններու, որոնք իրենց մշտական սկզբունք ունենան ուղղամտութիւնն ու ժողովուրդին շահը միայն, եւ ամէն ջանք ու զոհողութիւն չխնայեն այդ ժողովուրդին համար անձնուիրաբար աշխատելու, այն ատեն արդիւնքը խիստ գոհացուցիչ կը լինի, եւ մամուլն ալ իր ցանկալի դերը լրացուցած :

Պայման մըն ալ. — Մամուլը ժողովուրդի մը զուտ շահերուն թարգման ու պաշտպան լինելով հանդերձ, պէտք է լինի նաեւ բացարձակապէս անաչառ ու իրաւախոհ՝ բուրովին անտեսելով անձնական ու կուսակցական շահերը :

Բայց այսչափով դեռ չի վերջանար մամուլի դերը : Ան իր օգտակարութեան հետ կարող է հասցնել վնասներ ալ, որոնց աւելի կամ նուազ չափով ներգործումը կախում ունի մանաւանդ, նայելով թէ ինչ պայմաններու մէջ կազմակերպուած է ան եւ ի՞նչ միջավայրի մէջ կը գտնուի :

Ռուսայէ-Քոլար մամուլի վրայ խօսած իր ճառին մէջ քսած է. «Մամուլի օգուտն ու վնասն անբաժան են» : Ըստ իս, պէտք է ընդունիլ արդէն, թէ չկայ բան մը որ իր օգտակարութեան հետ չհասցնէ նաեւ որ եւ է վնաս՝ միեւնոյն գործի յաջողութեան համար : Ուրեմն նախամեծար է այն բանը՝ որուն օգտակարութիւնը համեմատաբար աւելի շատ է, քան պատճառած վնասը :

Ի՞նչպէս եւ ո՞ր աստիճան վնասակար կընայ լինել Մամուլը :

Քիչ առաջ գծեցինք անոր օգտակարութեան էական պայմանները : Ուրեմն, այդ պայմաններուն հակառակ, ան կը դադրի այլեւս օգտակար լինելէ :

Ահա՛ թէ ինչպէս : Օր մը, լրագրատպիտ մը յարձակողա-

Կան յօգուած մը հրատարակէ, ենթադրենք թէ ցորենի վաճառականի մը գէմ, կամ անձնական հաշիւներով, կամ պարզապէս յագուող տալու իր քմահաճոյքին եւ կամ գիրք մը ստեղծելու իր ընթերցողներուն առջեւ, եւ հրաւիրէ ամբոխն, որ արդար վրէժ լուծէ անկէ. . . :

Եթէ կարգ մը անօթիներ լսէին լրագրապետի խօսքին եւ գործադրելու ելլէին անոր սոսկալի ծրագիրը, ի՞նչ տխուր հետեւանքներ կրնային ծագիլ :

Ասով հանգերձ, անուրանալի է որ մամուլի անկախութիւնն որոշ աստիճանի մը մէջ պէտք է միշտ, որովհետեւ վերոյիշեալ գէպքերը նախ՝ շատ հազուադէպ են եւ երկրորդ՝ յօգուածի հեղինակը պատասխանատու է իր պատճառով ծագած ամէն խնդիրի: Այս մասին Էմիլ Օլիվիէ շատ սիրուն ռճոլ մը կը գրէ իր —Սոյիւսիօն փոյիզիփ և Սոսիալ—անուն հմուտ երկասիրութեան մէջ՝ մամուլի վրայ խօսած պահուն. «Անոնք որ յարգելով անկախութիւնը՝ կը փորձեն արգիլել սանձարձակութիւնը [լիսանս] կը յիշեցնեն ինձ այն մանուկը որ, օր մը, կը հարցնէր՝ թէ չէ՞ր կրնար ունենալ լոյս մը որ ստուեր չձգէ: —Տղաս, ըսի, կը գրէ Օլիվիէ, միջոց մը միայն կայ արգիլելու լոյսին, որ ըստուեր չձգէ, այն է մարիլ զայն. . . :»

Միջոց մը կայ, դրաքննութենէ ալ զօրաւոր, ամէն կերպով սանձափակելու մամուլի սանձարձակութիւնը. միջոց՝ որ նոյն իսկ կ'օգնէ անոր զարգացումին եւ կը խորտակէ իր յուրի ազդեցութիւնը. —Դիւրացնել որ լրագիրները, որչափ որ կարելի է, թիւով աճին եւ հեղինակութիւն ստանան ժողովուրդին մէջ: —Թոքվիլ կը վկայէ՝ թէ «Լրագիրները չէզոքացնելու միակ միջոցն է՝ շատցնել անոնց թիւը.» ինչ որ Լամարթին վերածած է. «Այն ազդեցութիւնը՝ զոր մամուլը կրնայ ունենալ հանրութեան միտքին վրայ, ուղղակի կը պարտի իր մոնոքոլիին եւ ոչ թէ իր անկախութեան»:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՏԱՊԱՆԱԳԻՐԾ

Աշևան շորցած քուփերու հետ
Հովիկն ա՛յն աչ քշեց սարաւ .
Վաղարշապատ ծաղիկն անհետ,
Դեռ չք բուրած իսպա՛ն կորաւ :

Սեւ գերեզմա՛ն մը փորեցին,
Լացող յեղաւ անոր վրասն .
Սիրոյ հաւնար ծընած հոգին
Անսե՛ր իջաւ ի գերեզման : [*]

«Անախպ Գործեր»

ԿՈՐԻՒՆ, ՄԿՐՏՉԵԱՆ

Ի Ղ Ձ Ս

Ո՛չ փառք ու պարծանք կ'ուզեմ անուանս հետ,
Եւ ո՛չ մահարձան դիակիս վրասն .
Բա՛ւ է որ գործերս չը լինին անհետ,
Ու նրաններուս օգտակար ըլլան :

ՀՐՈՒՇԱՆ,

[*] Հեղինակը, Մշոյ գիւղացի, եւ հայերէնի ուսուցիչ Սանասարեան վարժարանի, գրած է այս ոտանաւորը 1892 հոկտեմբերին, իր մահուան անկողինին մէջ : Խ.Մ.

ԳՐԵԼՈՒ ԱՐՈՒԵՍՏԸ

Պ ա ս ր ա ս ւ ե ց

ՄՈԳ—ՊԵՏ

Ա

Շարադրութիւն. — Գիւտ. — Կարգաւորում. — Ոճ կամ
Վայելյաքանութիւն

ԱՍ.ՉՄԱՆ. — Շարադրութիւնն այն արհեստն է, որ կ'ուսուցանէ կանոնաւոր կերպով ընդլայնել նիւթ մը:

Մեր գաղափարներն ու զբացումները յայտնելու համար, կը ջանանք միշտ՝ մեզի լաւ հասկցնել. ու այդ նըպատակով կը փնտռենք որոշ ուղղութիւն մը կամ մեթոտ մը՝ ո՛չ միայն մեր ընթերցողներուն կամ ունկնդիրներուն մտքերնիս լաւապէս բացատրել յաջողելու համար, այլ եւ շահագրգռելու զանոնք՝ իրենց ուշադրութիւնը հրաւիրելով: Այս տեսակ գործ մը, ուրեմն, գիպտածարար չէ կարելի ընել. այլ, գիտակցութեամբ եւ մասնաւոր խնամքով. բան մը՝ որ յաջորդարար երեք աշխատութիւն կը

[*] Այս խորագրին տակ պիտի գրենք յաջորդաբար եւ իրարու շղթայուած շարք մը յօդուածներ, ուր մեր նպատակը պիտի լինի գծել մեր ընթերցողներու առջև՝ գրելու դիւրին եղանակ մը եւ ուսուցիչներու՝ ուսուցումի գործնական մեթոտ մը: Այս վերջիններէն շատեր, մանաւանդ, պիտի յաջողին լաւապէս օգտուիլ անոնցմէ, եթէ խզճի մտօք աշխատին որ շարադրութեան կամ խմբագրութեան դասերը մարտիլի լինին իրենց աշակերտներու: Չէ՞ որ ասիկա այն միակ ուսումն է որ, իր գծուարըմբռնելիութեան պատճառով, յաճախ անտեսուած է մեր վարժարաններու մէջ: Մ—Պ

պարունակէ իր մէջ, ա) Գանել ըսուելիք բաները կամ Գիւտ, բ) Շարել յարմար կարգով մը զանոնք կամ կարգաւորում եւ գ) Արտայայտել լուսապէս՝ կամ Ոճ (վայելչաբանութիւն). ահաւասիկ ինչ որ կը կազմեն շարագրութեան երեք հիմնական մասերը եւ կուտան իր գեղեցիկ սահմանը :

Այսօր պիտի խօսինք այդ երեք կէտերու վրայ միայն :

Ա ԳԻՒՏ

ՍԱՀՄԱՆ. — Գիւտը մտքի այն ճիգն է որով, նիւթը տրուելէ յետոյ, կը գտնենք անոր ընդլայնումին հարկաւոր գաղափարները, զգացումներն եւ տրամաբանական մեկնութիւնները :

Գիւտը՝ մէկ խօսքով, ստեղծելու, հնարելու արուեստն է. այս բանին համար, ուրեմն, հարկաւոր են ինչ ինչ կարողութիւններ, որոնց գլխաւորները կրնան սեպուել երեւակայութիւնը, դիտելը, խորհողութիւնը եւ ամեն անոնք՝ որոնցմով միայն կարելի է իրերը քախսուցել, զանոնք վերլուծել եւ յուսարսակել: Ընթերցանութիւնն ու հետեւողութիւնն եւս իրենց մեծամեծ օգուտներն ունին, շարագրութեան այս մասին մէջ :

Գրագէտն իր երեւակայութեամբ կ'ստեղծէ գլուխ գործոցներ, ինչպէս Շէյքսպիր եւ Ռասին. առաջինը գրեց իր Հակոբին ու Օթելլոն. երկրորդն՝ իր Աքային եւ Անտոնիոսը, որոնց՝ անոնք սուին շունչ եւ ոգևորութիւն; ինչպէս նաեւ ուրոյն նկարագիր, անոնց շուրջը ներդաշնակաւորելով իրերու, դէպքերու ընդարձակ միջավայր մը եւ ամբողջութիւն մը: Բնագէտը կը գիտէ բոյսը, կ'առնէ եւ կը վերլուծէ զայն՝ քննելով անոր զանազան անդամները, ծաղիկը, ընձիւղն, արմատը, եւայլն. ու անոնց խրաքանչիւրին, իրարու հետ ունեցած առնչութիւնը կը հասկնայ եւ կ'որոշէ: Ընթերցանութիւնը կը հարստացնէ միտքը, ուրիշներու մտածումներով, եւ կը բազմացնէ անոր ծանօթութիւնները: Կը թերազրէ նորա-

նոր գաղափարներ, կ'արթնցնէ յիշողութիւնն ու մարդուն զարգացումին հրատարակելով կ'աւելցնէ: Հետեւողութեամբ՝ ներշնչուած ուրիշի մը գործէն, իւրաքանչիւր անհատ զայն տարբեր կերպով կ'արտայայտէ, անոր տալով իր մտքի բնատուգութիւնը:

Ինչպէս տրուած բացատրութիւններէն կ'երևի՝ շարադրութեան պահանջած այս առաջին աշխատութիւնն այնքան գիւրին չէ: Ընտրել իր նիւթը, անոր զանազան մասերն իրենց որոշ սահմաններով բաժնել, անոնց վրայ գաղափարներ յզանալ եւ վերջապէս նիւթին ընդլայնումին ծառայող բոլոր աղբիւրները գտնել. այս ամէնն ո՛չ միայն կախուած է հարուստ ծանօթութիւններ ունենալէ, այլև մտաւորական կարողութիւններու սկզբնական զարգացումէ մը: Որքան մտքի պաշարը ճոխ եւ սնունդն աւաա ըլլայ, այնքան կարողութիւնները կը լինին առողջ եւ իրենց ծաղկումն արագ: Կրթել յիշողութիւնը, զայն վարժեցնել յստա՛կ ըմբռնումներու, անաւասիկ մտքի կորով ձեռք բերելու յարմարագոյն միջոցը:

Ինչ ճամբու հետեւելու է Գիւսի մէջ. այդ բան կախուած է միայն տրուած նիւթին ընտրութիւնէն. իւրաքանչիւր շարադրութեան տեսակ իր սեպնական կանոններն ունի, զորս կարգով պիտի ջանանք ուսումնասիրել, մեր Գրեյու Արուեստը վերնադրին տակ սկսած այս ընթացքին մէջ, ու օրինակներով զանոնք ներկայացնել եւ բացատրել: Միայն անյուշակի բսնք որ՝ երբ արդէն ունինք հարկաւոր պաշարը, երբ վերեւ յիշուած մտաւորական կարողութիւնները բաւական զարգացած են մեր մէջ, որոնցմով կրնանք զանազանել նիւթին գաղափարներու մէջ գլխաւորներն ու կարեւորները, նշանակինք զանոնք եւ հաւաքենք անոնց շուրջը երկրորդականներն ու նուազ կարեւորները: Այսպիսի մեթոս մը մեզ ազատ պիտի պահէ ամեն կնճռատութիւնէ եւ շիթութիւնէ. ու երբ, անգամ մը, տիրենք այս սովորութեան՝ նիւթին վրայ մեր ձգած սկզբնական վերիւրերոյ ակնաբկին պիտի յաջորդէ անմիջապէս, կատարելով, յստակ եւ ճշմարիտ

ըմբռնում մը: Այն ատեն միայն, շարադրութեան յաջակագիծը պատրաստ կը լինի եւ կարգաւորուեն ինքնին ծնած:

Բ ԿԱՐԳԱՌՈՐԻՍ

ՍԱՀՄԱՆ. — Գաղափարները, զգացումները, իրողութիւններու տրամաբանութիւնը՝ իրարու հետ կապելու, լաւ կերպով ներդաշնակելու դործը, որոշ տպաւորութիւն մը միայն յառաջ բերելու համար, կը կոչուի կարգաւորում:

Երբ Գիւտի սկզբնական աշխատութեան մէջ ստեղծած ենք արդէն կանոնաւոր ուղղութիւն մը, այլեւս դիւրին կը լինի կարգաւորումը, ոչ կը ձուլուի անոր հետ, ուրկէ ծնունդ առած է: Դարձեալ, երբ գլխաւոր եւ երկրորդական գաղափարներու կարգը, նիւթին տեսակին համաձայն, գտած ու սարքած ենք ու զանոնք իրարու քով հաւաքած, ինչպէս որ են բնութեան՝ իրականութեան մէջ արդէն, կրնանք այլեւս ապահով ըլլալ՝ թէ պիտի գրենք ու ըսենք ամեն բան ճիշտ իրեն սեպհական տեղն եւ պիտի հասնինք ներդաշնակ ամբողջութեան մը, ուր ոչինչ անտեսուած է, ոչինչ մոռցուած է: Ու, ինչպէս կը տեսնուի, այսպէս շինուած յատակագծի մը բոլոր մասերը պէտք է ծառայեն միմիայն մէկ շէնքի, մէկ գործի կամ ծրագրի ներկայացումին եւ բնատիպ արտադրումին. եւ այս օրէնք ընդհանուր է ինչպէս պատմութեան մը, նոյնպէս ալ նկարագրութեան մը եւ ճառագրութեան մը մէջ: Փէնէլոն ըսած է.

«Ծրագրի միակութիւնն է միայն պատճառ, երբ կը տեսնենք, առաջին հայեացքով, գործի մը ամբողջութիւնը, ինչպէս որ կը տեսնենք հասարակաց հրապարակէ մը քաղաքին բոլոր փողոցներն եւ տուներուն դուռները, եթէ անոնք ուղիղ եւ համաչափ են. . . : Ի՞նչ գաղափար պիտի ունենայինք ճարտարապետի մը վրայ, երբ ան որ եւ է տարբերութիւն չըզգար պարստի մը, որուն բոլոր յօրինուածական մասերը համեմատական պիտի ըլլան՝ միեւնոյն ծրագրով ամբողջութիւն մը կազմելու համար, եւ փոքրիկ

չէնքերու զէզի մը մէջ, որ երբէք ճշմարիտ միութիւն մը չի ներկայացներ, թէեւ իրարու քով յաջորդաբար կանուցուած: . . . Որ եւ է գործ ճշմարիտ միակութիւն մը ունի այն ատեն միայն, եթէ կարելի չէ, առանց անոր ոգիին եւ կենդանութեան վնասելու, անկից մաս մը հանել: »

Պիւֆոն եւս յստակագծի կարեւորութեան վրայ շեշտած է, այն զեղեցիկ ճառին մէջ, զոր արտասանած է ֆրանսական Ակադեմիան ընդունուած պահուն. «Յատակագծի բացակայութենէն եւ նիւթին վրայ լաւ մտածած չըլլալէն է որ, յաճախ, մտացի մէկը կը վարանի եւ չի հասկնար ուրկէ սկիւլ իր գրութիւնը: Կը նշմարէ, միանգամայն, գաղափարներու հոծ թիւ մը, եւ որովհետեւ զանոնք ո՛չ իրարու հետ բաղդատած է եւ ո՛չ համաձայնեցուցած, երբէք չի յաշոյիբ անոնց մէջ մասին նախամեծարութիւն ապու եւ մնացածներուն իրենց սեպհական արժէքը. ու, այսպէս, կը մնայ անիկա աարակուսանքի եւ անստուգութեան մէջ: »

Յատակագծի մէջ գլխաւոր օրէնք է, դարձեալ, անոր բոլոր բաժանումները յստակօրէն եւ որոշ կերպով ներկայացնել, այսինքն իր բաժանումները պէտք է հիմնուած լինին ճշմարիտ արարողութիւններու վրայ, որոնք ցոյց տան նիւթին մեծութիւնն եւ իր զանազան մասերու իրական ծաւալը:

Վերջապէս կապակցութիւն եւ հարեւանութիւն զնել նիւթին բաժանումներուն մէջ, որպէսզի անոնք իրարու ընական կերպով մը յաջորդեն, իրենց փոխադարձ յարակցութիւններով, ո՛չ միայն նկատելի եւ գլխաւոր կէտեր են՝ այլեւ անհրաժեշտ եւ հարկաւոր. «Պէտք է որ ամեն ինչ հոն իր բուն տեղը գրուած ըլլայ, այնպէս որ սկզբնաւորութիւն եւ վերջաւորութիւն համապատասխանեն միջին մասերու.» ու այս պայման ընդհանուր է ամեն տեսակ արհեստական գործերու ալ, նկարչութեան, արձանագործութեան, եւայլն. ինչպէս ամեն տեսակ շարագրութեան կամ գրութեան: Ու Պուալօ այդ յիշուած տողերու տակ կ'աւելցնէ. «Պէտք է

որ նուրբ արուեստի մը կարկառուն մասերը, հոն, ուրիշ-
ներու հետ՝ ամբողջութիւն մը միայն կազմեն : »

Գ ՈՃ

ՍՍ.ՀՄԱՆ. — Երբ արդէն գաղափարները գտնուած եւ
իրողութիւնները բնական եւ ներդաշնակ կերպով մը մատ-
նանիշ եղած են, կը մնայ զանոնք արտայայտել յստակ,
ճշգրիտ եւ կենդանի գոյնով մը. ահա այս գործողութիւնն
է որ կը կոչուի Ոճ կամ Վալեյյաբանութիւն :

Թէև ոճի ընդհանուր եւ մասնաւոր յատկութիւններու
ու պատկերներու այլազանութեան վրայ չպիտի խո-
սինք առ այժմ, սակայն լաւ լորդ չի լինիր երբ երկու
խօսքով, անոր անմիջական առընչութիւնն եւ կապակցու-
թիւնը բացատրենք, շարադրութեան, վերեւ ցոյց տրուած
կրկին մասերու հետ :

Երբ միտքն արդէն ըմբռնած է նիւթին հարկաւոր եւ
անհրաժեշտ սահմաններն եւ անոնց տարածութիւնը, երբ
զանոնք համեմատած եւ իրարու ենթարկած է, այլեւս զայն
արտայայտելու համար մեծ դժուարութիւն մը չըզգար :
Բացատրութիւններն ինքնին կուզան կոկիկ եւ պայծառ
կերպով եւ ոճը կ'ստանայ իր ախորժեղի կերպարանքը :

Պուալօ խիստ գեղեցիկ կերպով բացատրած է զայս .
« Մեր գաղափարներու առաւել կամ նուազ մթութեան կը
հետեւի մեր արտայայտութիւնը՝ որ կը լինի, իր կարգին,
կամ մոտիկ եւ կամ մեկին : Ի՛նչ որ լաւ կը յղանանք՝ կ'ար-
տայայտենք պայծառօրէն, ու զայն ըսելու համար՝ բառերը
դիւրութեամբ կը հասնին » :

Պիւֆոն իր ճառին մէջ կը շարունակէ թէ ի՛նչպէս յա-
տակագիծն ոճին հետ սերտ կերպով կապուած է եւ փոխա-
դարձաբար : « Երբ յատակագիծ մը շինուած է, երբ նիւ-
թին հարկաւոր բոլոր մտածումները հաւաքուած եւ կար-
գաւորուած են, մարդ, գիւրութեամբ, պիտի գուշակէ այն
վայրկեանը, ուր պէտք է գրիչը ձեռք առնէ. պիտի զգայ
մտքին հասուն ընթացքն եւ պիտի ջանայ անոր փթթումը
փութացնել. պիտի ունենայ, նոյն իսկ, գրելու հաճոյքը

միայն, եւ գաղափարները իրարու պիտի յաջորդեն առանց ճիգի եւ ոճը պիտի լինի սահուն ու քնակաւն : Այդ հաճոյքէն պիտի ծնի տաք կենդանութիւն մը, որ պիտի տարածուի ամեն կողմ, եւ կեանք պիտի տայ իւրաքանչիւր արտայայտութեան . ամբողջութիւնը պիտի ոգեւորի աստիճանաբար, շեշտը պիտի բարձրանայ, առարկաները գոյն պիտի ստանան, ու զլացումը՝ միանալով պայծառութեան, անոր հրապոյրը պիտի աւելցնէ, զայն հետուն պիտի տանի, ըսուածէն ըսուելիքը պիտի մղէ ու այսպէս ոճը պիտի լինի շահագրգիռ եւ փայլուն : » [*]

ԿԷՈՐԳ ՄԿՐՏԻՉԵԱՆ

(Աշակերտ Հանգստանակիւս բարձ. Վարժարանի)

ՀՆԷԱԲԱՆՈՒԹԻՒՆ

[PALÉONTOLOGIE]

Հնէաբանութիւնը [**] մինչեւ հիմա երկրագնդիս վրայ ապրած բոյսերու եւ կենդանիներու ուսումն է . կամ պատմութիւնն երկրագնդիս՝ սկսած այն զանազան խաւերէ՝ որ

[*] Հաւնաբանի յառաջիկայ թիւին մէջ պիտի խօսինք Շարագրութեան նկարագրութիւն մասին վրայ . ուր, այս անգամ արուած օրէնքներու գործածութիւնը, օրինակներով եւ լայն բացատրութիւններով պիտի պատկերացնենք : Մ—Պ

(**) Հնախօսութիւն—Archéologie (Հին ճարտարարուեստներու եւ Յիշատակարաններու պատմութիւն) : — Հնագիտութիւն—Antiquité (Հին թանկագին առարկաներու ուսում) : Խ. Ծ .

քնակարան եզան կենդանի էութիւններու: — Աստղաբաշխական տեսութիւնները ցոյց կուտան՝ թէ երկրագունդս անցած է յաջորդաբար՝

1. Տիեզերական կամ Աստղաբաշխական [époque cosmique] 2. Շմիտի կամ Արեգակնային [époque de Smidt ou solaire] եւ 3. Երկրաբանական [époque géologique] շրջաններէն:

Առաջին շրջանին մէջ երկիրս հրային՝ հալած վիճակ մ'ունէր. յետոյ իր հեղուկ մակերեսը հետզհետէ շրջապատուեցաւ կղկղանքներով [scories], որոնք տակաւ սլաղելով կազմեցին անոր կեղեւին զանազան խաւերը:

Երկրաբանական շրջանին վերջին բուլն [phase] է ժամանակակից դարը, ուր կազմուեցան չորրորդակ հողերն [terrains quaternaires] եւ ուր նշանակելի փոփոխութիւն մը չի տեսնուիր կենդանական եւ բուսական թագաւորութիւններու մէջ. նման այն փոփոխութիւններու, որոնց թատր կը հանդիսանայ մեր մոլորակն առաջնորդակ, երկրորդակ եւ երրորդակ դարերու մէջ. գրեթէ այն տեսակի եւ սեռի ասնասուններ կ'երեւին, ինչ որ կը տեսնենք մեր օրերը, փոքր ինչ փոփոխութեամբ, օր. կարգ մը վիթխարի ըստնաւորներ կ'անհետին կամ աշխարհիս մէկ մասէն միւսը կը ներմուծուին, ինչպէս ձին, որուն հայրենիքն է Թաթարիստան, կը տարուի Եգիպտոս եւ Ամերիկա: [*]

Հնախօսներն ու Հնէաբանները ժամանակակից դարը կը բաժնեն 1. Նախապատմական, 2. Պատմական շրջաններու: Առաջինին մէջ կը գտնենք մարդուն եւ իր ճարտարարուեստներու հետքերը, որ ցոյց կուտան մտաւորապէս անոր երկրիս վրայ երեւնալու թուականը: Յետոյ կուգան ասորական, հրէական, քաղդէական աւանդութիւնները, որոնցմէ արդի գիտութիւնը ջանաց օգտուիլ: Պատմական շրջանը Բրիտտոպէ 3500 տարի առաջ սկսելով կը հասնի մինչեւ մեր օրերը:

[*] Բրիտտափոր Գօլոմպոսի ատեն Ամերիկա ձի չէր գտնուեր: Սպանիացիք զայն հոն տարին: Մեքսիքայի մէջ կատարուած սկզբումներու ատեն գտնուեցան ձիու քրածոներ:

Երկրաբանական շրջանին մէջ կենդանիներն ու մարդը կ'երեւին գնդիս վրայ, կ'աղբին եւ կը ջնջուին: Հնէաբանութիւնն ի վեր կը հանէ այն յաջորդական փոփոխութիւնները, զոր կրեցին բոյներն ու անասունները՝ այդ շրջանին մէջ, եւ թայլ կուտայ մեզ կազմել կենդանի էութիւններու պատմութիւնը [Histoire des êtres vivants] .

Բրածոներու պատմութիւնը կարելի չէ բաժնել արդի անասուններու եւ բոյսերու պատմութիւնէն . մանաւանդ որ այս վերջիններու ճշգրիտ ուսումնասիրութեան համար առաջինն անհրաժեշտ է: Կենդանաբանական եւ բուսաբանական այժմու շլթային շատ մը օլակները պակաս պիտի մնային եթէ հնէաբանութիւնն իր երկիս ծալքերէն քաղած նմոյշներով զանոնք չամբողջացնէր. կամ շատ մը դասակարգերու աստիճանաւոր յաջորդութիւնն եւ մէկէն միւսին անցնելն անորոշ կերպով պիտի մեկնուէր, եթէ Cuvier—ներ Lourillard—ներ, Brognart—ներ, Schimper—ներ, եւ այլն, երկրիս ալքերը խուզարկելով զանոնք չլուսաբանէին:

Կեանքի երեւումն երկրագնդիս վրայ. — Շմիտի շրջանին՝ կեանքի գոյութիւնն անկարելի է. ան կ'սկսի երկրաբանականէն միայն, ուր երկրիս մակերեսոյթին կղզկանքները՝ հետզհետէ պաղելով, կազմեցին անոր կեղեւը, որու վրայ սկսան խտանալ, փոքր առ փոքր, մթնոլորտին կազերն ու շոգիներն [NaCl, KBr եւն.] եւ քիչ յետոյ, ջրաշոգին: — Երկրադնդիս կեղեւին որ եւ է կէտին կրած ճնշումը հաւասար էր, առ նուազն՝ իր վրայ գտնուած ջուրի սիւնակին: Արդ, հաշիւները ցոյց կուտան թէ՛ այդ ճնշում, մօտաւորապէս, 300 մթնոլորտի կը հասնէր. վիթխարի ճնշում մը՝ որու տակ 400 աստիճան բարեխառնութիւն ունեցող ջրաշոգին կը խտանայ. հետեւաբար պիտի ըսենք թէ առաջին մրրային խաւերը [terrains sédimentaires] կազմուեցան, երբոր երկրիս մակերեսի բարեխառնութիւնը 400°ի իջաւ: Բայց այսպիսի բարեխառնութեան մը մէջ անասունները դարձեալ անկարող էին ապրիլ. ուստի հաւանական ենթադրութեամբ կեանքի կտրուի երեւումը տեղի ունեցած է դէպի 70 աստիճանին. թէ եւ

կան, քիչ մ'աւելի բարձր բարեխառնութեան մէջ ապրող՝ անասուններ ալ :

Կեանքն երեւցաւ իր ամենէ պարզ եւ տարրական՝ միաբջիջային [monocellulaire] կամ համաբջիջային [homocellulaire] ձեւերուն տակ. ինչպէս ցոյց կուտայ բարեշրջութեան [évolution] օրէնքը, — մարդը ձուիկէ մը կը յառաջածագի: — Երկրիս մակերեսը շրջապատող տաք ջուրերուն մէջ, առաջին անգամ, երեւցան մանրաբոյսեր [bactéries] եւ մանրածճիւններ [infusoires] որոնք, միահաղոյն, կը կազմեն նախակենսիկները [protistes] .

Նախնական բջիջը զանազանաւորելով [différencier] եւ գործարանաւորելով, երկրաբանական դարերու ընթացքին մէջ, կը կատարելագործի եւ կը հասնի արդի բազմաբարդ եւ բազմաբջիջ ձեւերուն, ուր դիւրին կը լինի մեզ, կենդանական եւ բուսական թաղաւորութիւններն իրարմէ յստակօրէն բաժնել, ինչ որ գրեթէ անկարելի էր ընել՝ նախակենսիկներու ձեւին մէջ :

Կենդանական քաղաւորութիւն. — Կենդանաբանները նըկատելով բջիջին նախնական եւ բազմաբարդ ձեւերը, կենդանիներն երկու մեծ ենթաթաղաւորութիւններու [sous-règnes] կը վերածեն, — 1. Նախնակենդանիներ [Protozoaires], 2. Վերջնակենդանիներ [Mézozoaires]. ասոնք ալ, իրենց կարգին, ձիւղերու [enbranchements] կը բաժնուին. ինչպէս, վերջնակենդանիներու մէջ, ողնաւորներ [vertébrés], օղակաւորներ [annelés], կաղաւորներ [mollusques], եւ այլն :

Ձիւղերն ալ, ինչպէս բուսական նոյնպէս կենդանական թաղաւորութեան մէջ, կ'ստորաբաժնուին դասերու [classes], կարգերու [ordres], ընտանիքներու [familles], սեռերու [genres] եւ տեսակներու [espèces] :

Անհաար յիշատակելու համար իր սեռական անունը [nom générique] կը կցեն տեսականին [nom spécifique], ինչպէս շունը կամ գայլը՝ որոնց երկուքին ալ սեռական անունն է canis. զի մէկ սեռի կը պատկանին. սեռական անունին կը տարբերի, հետեւաբար կ'ըսենք առաջինին

համար՝ canis familiaris եւ երկրորդին համար՝ canis lupus .
 ու այսպէս, հեռզհեռէ, ընտանիքին, կարգին, դա-
 սին անունները տալով կը գտնենք որ շունն եւ գայլը կը
 պատկանին ողնաւորներու ճիւղին :

Բրաժոններու կազմուիլը . — Եթէ քննենք՝ պիտի տես-
 նենք որ անասուն մը մեռնելէ յետոյ՝ մթնոլորտական ազ-
 դակներու կնթակայ՝ կը փտտի ու վերջ ի վերջոյ կամ հո-
 ղի կը վերածուի եւ կամ կ'անհետի բոլորովին : Բայց ծո-
 վերու, լիճերու եւ ճահիճներու մէջ մեռնող անասուննե-
 րու դիակը, մասամբ, կը պահպանուի . կմախքը թաղուե-
 լով երկրի մրրային խաւերու մէջ, կը ճողպրի բնութեան
 համայնաշինջ աղբակներու [agents destructeurs] ձեռքէն եւ,
 ուր ուրեմն, տարիներու հոլովումին մէջ, կը կազմէ բրա-
 ծոյ [fossile] մը :

Ջրային անասուններու համար այս բան դիւրին կը
 յաջողի . իրենց խեփորներ [coquille] հանգչելով մրրային
 խաւերու վրայ, կը ծածկուին նորանոր խաւերէ, ու այս-
 պէս թաղուած կը մնան :

Ցամաքային անասունները՝ երբ իրենց շունչը կը փը-
 չեն անտառի մը խորը, ժայռի մը գագաթը կամ հարթ
 դաշտի մը վրայ, յաճախ կը ծածկուին հալող մաշող բեկոր-
 ներու փոշիին տակ . կամ հեղեղանման անձրեւներէ եւ ո-
 ղումներէ առեւտարուած, իրենց ոսկորները կը հասնին ծո-
 վերու խորը, գետաբերանները, ուր հոսանքի ուժգնու-
 թեան նուաղելովը, յատակ կը հոտին աւազի, խիճի կամ
 կաւի հետ խառնուած :

Դիտելի է թէ ծովերու յատակին կարկառները ցամա-
 քիններուն չեն նմանիր : Այս վերջինին փխրուկ մասերը
 միայն անձրեւէն առեւտարուելով [charrier], հաստատուն
 մասերը կը մնան իր մակերեսին վրայ եւ կը ներկայացը-
 նեն բազմակնձիռ ելեւէջներ . ընդհակառակը ծովերուն յա-
 տակը նուազ կարկառուն է եւ իր խորտուբորտութիւննե-
 րը նուազ չեշտուած . գայռն եւ մրուրը կը սուղին դէպ
 ի վար զուգահեռական խաւերով, եւ եթէ, որ եւ է պատ-
 ճառով, այդ սուզախաւերու [dépôts] բնոյթը փոխուի,

կազմուած այլազան խաւերը փոքր հակում մը կը ներկայացընեն : Խաւերու [couches] կազմութեան այս եզանակը կը կոչուի խաւաշարութիւն [stratification] : Սկիզբէն այս խաւեր հորիզոնական ալ էին, բայց երկրաշարժներու հետեւանքներով վերջէն հակած դիրքեր ստացած են :

Ուրեմն, երկրիս կեղեւը, մեծ մասով, կազմուած է խաւաշարուած զանգուածներէ որ, բացի հանքային նիւթերէ, կը բազկանան նաեւ խեփորներէ եւ հեղեղներու բերած ոսկերոտիքներէ :

Կերպափոխութիւն (Métamorphisme). — Յաճախ կը տեսնենք ծովափին վրայ՝ աւազին հետ խառնուած խեցիներ եւ ժժմակներ. ասոնք, գրեթէ միշտ, ապաւայ բրածոներ ըլլալու սահմանուած են. նոյն բանը պատահած է նաեւ հին ժամանակներ, ինչ որ այսօր պեղումներու առարկայ եղած է : Այդ հին դարերու խեցիներ բազդատելով հիմա գոյութիւն ունեցողներու հետ, կը տեսնենք որ համանման [analogue] են բայց ոչ նոյնատիպ [identique]. ուրեմն կեանքը փոփոխութիւն մը կրած է :

Իրօք, մերային խաւերու մէջ թաղուած ոսկորներ եւ բեկորներ, թէեւ արտաքին ազդակներէ զերծ, բոլորովին անվթար չեն մնացեր. որովհետեւ այդ խաւեր յետոյ ֆիզիքական փոփոխութիւններ կրեցին : Քանի իրենց շարքերը բազմացան, նորերը հիներուն վրայ իրենց բոլոր ծանրութեամբ ճնշելով՝ զանոնք երկրիս կեդրոնին աւելի մօտեցուցին ուր անոնք տաքցան : Այս ջերմութիւնը, ճընշումն եւ կմախքին ծակոտիքներու մէջ բանտարկուած ջուրն իրենց ազդեցութիւններով, յառաջ բերին տեսակ մը փոփոխութիւն զոր հնէաբանները կը կոչեն կերպափոխութիւն՝ որ առաւ կմախքին կարծր եւ քարացած [pétrifié] վիճակ մը, զոր կը բնորոշեն բրածոյ անունին տակ :

ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ՀԷՆԵՊԻՔ

Կարելի չէ ուրանալ այն բնածին յատկութիւնը զոր ունին Հայերը, ճարտարապետական արուեստին մէջ:

Եթէ մէկն ուզէր գրել Պոլսոյ ճարտարապետութեան պատմութիւնը, պիտի գտնէր բազմաթիւ հայ ծանօթ դէմքեր, որ նշանաւոր եղած են արեւելեան ճարտարապետութեան մէջ:

Պալեաններու անուանի վերդաստանն էր՝ որ ճարտարապետութեան այդ ոսկեգարն արտադրեց, օժտուած գեղեցիկին ներշնչումով եւ ճաշակի նրբութեամբ ու ազնուութեամբ:

Այդ ոսկեգարին հրաշակերտներն եղած են Տօլմա—Պաղչէի եւ Զրաղանի նրբակերտ պալատները, որ մինչեւ այսօր հիացումով կը դիտուին. սակայն ցաւալի է որ այդ մեծ վարպետները, այս թէ այն պատճառով, չունեցան իրենց արժանի յաջորդներ. ճաշակի նրբութիւնը կը պակսէր այս վերջիններու, ինչպէս նաեւ իրենց թերութիւններն ուղղելու եւ կատարելագործուելու խանգը: Թող չըսեն թէ բարձր վարժարաններ չունեցանք. բնաւ միջոցներ չէին պակսիր այդ արուեստը զարգացնելու:

* * *

Ո՛րքան բազմաթիւ գիւտեր մեր արդի ճարտարապետներու ուշադրութիւնն իսկ չեն հրաւիրած իրենց վրայ:

Շուրջ երեք տարի առաջ, Փարիզ, Հէնէպիք անուն որմնագիր մը՝ սիրահար իր արուեստին, երկար տարիներու տքնութիւններէ յետոյ, յաջողած է գիւտ մ'ընել, այսինքն՝ շինել շէնք մը խճախառն չիմենթրոյթ [ciment]

և երկաթի բարակ թելերով . ու այդ գիւտն այսօր կը կրէ իր հնարիչին անունը, — Հէնէպիքեան Դրուժիւն [Système Hennebique] .

Այդ դրուժեամբ ո՛չ միայն կարելի է պարզ շէնքեր կառուցանել, այլ և կամուրջներ, քարափներ, ջրամբարներ, կոյուղիներ, աւելի՛ գիմացկուն և խնայողական :

Ուրիշ առաւելութիւն մ'ալ ունի այդ դրուժիւն, այսինքն շինութիւնները բացարձակապէս զերծ են հրդեհի և երկրաշարժի աւերիչ վտանգներէն . ու շէնքի ամբողջ նիւթը խիստ փոքր ծաւալ ունի՝ համեմատաբար ուրիշ դրուժիւններու :

Հէնէպիքի այս սքանչելի գիւտը մեծ հռչակ ունի այսօր Եւրոպայի, Ամերիկայի և Եգիպտոսի մէջ : Այս դրուժեամբ շինուած է Գահիրէի նոր Միզեմ . մեծ թիւով շինութիւններ կան 1900-ի արուեստահանդէսին մէջ, գլխաւորաբար՝ Կեղարուեստներու Պալատը : Կը շինուի նաեւ պալատ մը, որ իր ամբողջութեամբ Հէնէպիքի գիւտը պիտի ներկայացնէ :

Ուրիշ առիթով աւելի կը ծանրանանք այս գիւտին վրայ, որուն գործածութիւնը հաւանօրէն մուտք պիտի գտնէ Տաճկաստան և այլուր . քանի որ արդէն շատ երկիրներու մէջ անիկա հիւրընկալուած է և այն ալ մենաշնորհով :

Փարիզ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ— Պ. Վ. Պէքերեան, Ռոտտիթոցի, իր յօդուածին նիւթը կ'ուսումնասիրէ անձամբ, աչակերտելով բաւական ժամանակէ ի վեր, Փարիզ, Հէնէպիքի մօտ : Իր լուրջ աշխատութեամբ, մեր բարեկամը կոչուած է արժանաւոր յաջորդ մը լինել՝ մեր հին նշանաւոր ճարտարապետներու :

ԽՄԲ.

Փ Ա Ր Ի Զ Ի

ՀԱՐՏԱՐԱՌՈՒՍԵՏՆԵՐՈՒ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՔԱՐԱՆԸ
(ÉCOLE CENTRALE DES ARTS ET MANUFACTURES)

Պ ա ս ր ա ս ե ց

ՏԻԿՐԱՆ ԴԻՄԱԲՍԵԱՆ

Ասպարեզի ընտրութիւն . — Շահեկան ասպարեզ մ'ընտրե-
լը՝ լաւ ասպարեզի մը հիմը գնել է . ինչ որ նախագուշու-
թեան եւ լուրջ մտածումի կը կարօտի : Շատ երիտասարդ-
ներ, իրենց հայրենիքէն մեկնելէ առաջ, կը մոռնան եւ-
րոպական կրթական եւ մասնագիտական հաստատութիւններ
ընտրելու վրայ ստոյգ տեղեկութիւններ քաղելու . ուրիշներ, այդ
բանին համար, միջոց չունին կամ զայդ կ'անգիտանան .
այնպէս որ Եւրոպա հասնողներու մեծագոյն թիւ մը՝ յաճախ,
յուսասիարութեան մէջ կ'իյնայ, թէ՛ նպատակի առարկայ
եղած մասնաճիւղին պահանջած մտաւոր զարգացումին եւ
թէ՛ անոր հարկաւոր մեծ զոհողութիւններու կրկին անսա-
կէտներով : Ու այսպէս նոր միջավայրի մէջ ինկած երի-
տասարդը տարտամ վիճակի մը կը մատնուի, որ, դժբախ-
տաբար, երբեմն զայն խիստ հեռուները կը տանի . ու եթէ,
այս պարագային, ան, ինքզինք կտառվարելու հաստատա-
կամութիւնը չունենայ եւ քիչ մ'ալ համոտեամ ըլլայ փա-
րիզեան կամ առ հասարակ եւրոպական կեանքի գառն անու-
շութիւնները, կրնաք երեւակայել այն ատեն իր բարոյա-
կան անկումն եւ արգահատելի դրութիւնը : Դարձեալ, տես-
նուած են շատեր որ աննպատակ Եւրոպա հասած են ու, մէկ
երկու տարուան մէջ, հինգ ու վեց մասնագիտութեան հե-
տեւելու որոշում տուած եւ ո՛չ մին գործադրած են . մինչդեռ
իրենց ընկերակիցներ, այդ պահուն վարժարան մտած ու
իրենց մասնաճիւղը կատարելագործելու աշխատած են . թո-
ղունք անունք որ իրենց ընտրած մասնագիտութեան երկա-
մեայ շրջանն աւարտած ու գործի փութացած են : Եւրոպա
գալէ առաջ՝ իր ընդունակութեան եւ նիւթական ու բա-
րոյական վիճակի համեմատ, իւրաքանչիւր ուսանող պէտք

է իր ասպարէզի ընտրութիւնը կատարէ եւ անոր համար լուրջ կերպով պատրաստուի :

Ուրեմն, որ եւ է ուսանող մասնագիտութիւն մը սովորելու համար՝ երեք գլխաւոր կէտեր նկատի առնելու է. 1. իր ընդունակութիւնն եւ մտաւորական զարգացումը, 2. իր ընտրած վարժարանին ընդունելութեան պայմաններն եւ 3. իր նիւթական կարողութիւնը : — Ֆրանսական մասնագիտական եւ կրթական հաստատութիւններու վրայ զրեւով, մեր նպատակն է՝ այդ երեք կէտերու վրայ, շահագրգռուողներու գոհացում տալ :

Էֆօլ Սանքրալ. — Գեղեցիկ ապագայ խոստացող վարժարան մ'է ասիկա : Հիմնուած է Փարիզի մէջ՝ ճարտարաուեստի ամեն ճիւղերու համար քաղաքային վարպետներ [jugénieurs civils] պատրաստելու : Իրենց ընտրած ճիւղերու այլազանութեան համեմատ՝ այս վարժարանն աւարտողները մեծ ասպարէզներ ունին : Ելքի քննութիւններու մէջ բարձր դասակարգ ունեցողներն անմիջապէս գործ կը գտնեն. պաշտօններ ալ՝ եթէ բարձր ընտանիքներու հետ յարաբերութեան մէջ են : Մինակ իրենց սխիլումով գործ փնտոողները, թէեւ քիչ մ'ուշ, գրեթէ լաւ վիճակի մը կը հասնին միշտ : Ամեն շրջանաւարտ հետզհետէ կը շահի տարին 4000, 6000 եւ մինչեւ 10,000 ֆրանք, թէեւ շատ աւելի շահողներ ալ պակաս չեն :

Վարժարանը ցերեկօթիկ է. ուսման շրջանն է երեք տարի միայն : Յաճախակի քննութիւններ տեղի կ'ունենան : այնպէս որ աշակերտը միշտ աշխատելու պարտաւորուած է վարժարանէն դուրս, ուր թէեւ հսկողութեան ենթարկուած չէ : Լուրջ չաչխատողներ կ'արտաքսուին :

Էֆօլ Սանքրալ մտնելու համար թեկնածուները մրցում [concours] կ'անցնեն, որ տեղի կ'ունենայ տարին երկու անգամ, յուլիս 1-ին եւ սեպտեմբեր 30-ին : Առաջին մրցումունին ներկայացողներն երկրորդին մասնակցելու իրաւունքը տունին, Այս տարի առաջին եւ երկրորդ մրցումներու ներկայացողներու թիւը կը հասնէր գրեթէ 1000-ի, որոնց 240 առաջինները միայն ընդունուած են. ինչ որ լուրջ գաղափար մը կուտայ թէ ո՛րչափ լաւ պատրաստուած լինելու է՝ յաջողելու համար : Փարիզի մէջ կան Լիսէներ եւ Գոլիմներ որ՝ ինչպէս Էֆօլ Սանքրալի նոյնպէս ալ ուրիշ

մասնագիտական վարժարաններու մրցումին՝ աշակերտները պատրաստեն :

Մրցումին մասնակցելու համար պէտք է գիտնալ .

1. Ֆրանսերէն լեզու (Շարագրութիւն եւ ուղղագրութիւն) :— 2. Թուարանութիւն՝ տեսական եւ գործնական :— 3. Տարրական Երկրաչափութիւն [géométrie élémentaire] ամբողջ :— 4. Տարրական Գրահաշիւ [algèbre élémentaire], իր հետ հաշուած—logarithme; intérêts composés; annuités; amortissemets. — 5. Բարձր. Գրահաշիւ [algèbre supérieure], այսինքն՝ combinaisons; séries; fonctions; dérivées; étude des équations; interpolation եւ այլն :— 6. Տարրական Եռանկիւնաչափութիւն (ուղղագիծ) — [trigonométrie rectiligne]. — 7. Վերլուծական Երկրաչափութիւն [géométrie analytique à 2 et à 3 dimensions]. — 8. Նկարագրական Երկրաչափութիւն [géométrie descriptive] ամբողջ :— 9. Բնագիտութիւն [physique] բացի Չայնէն :— 10. Քիմիարանութիւն [chimie], մետաղակերպները միայն :— 11. Բնապատմութիւն [histoire naturelle], մարդակազմութիւն եւ բուսարանութիւն միայն :— 12. Գծական գծագրութիւն [dessin linéaire].

Իրտել տանք որ ծրագրին մարեւաքիֆական գիտութիւններն եւ գծագրութիւնն ամենէ կարեւոր առարկաներն են, որոնց վրայ մասնաւոր ուշադրութիւն կը դարձրնեն . այագային ճարտարապետական եւ նաւային նկարներն անմիջապէս առնելու համար, այդ բանին մէջ մեծ վարժութիւն հարկաւոր է : Պէտք է նաեւ հաշուեքանակի [règle à calcul] գործածութիւնը գիտնալ :

Մրցումները զրաւոր եւ բերանացի են : Գրաւորի ատեն իւրաքաչիւր առարկայի հինգ ժամ կը յատկացուի . իսկ բերանացիի ժամանակ մէն մի աշակերտ առ նուազն 15 վայրկեան կը հարցաքննուի : Այն թեկնածուներն որ պլասակաւորի [bachelier] վկայական ունին 15 նոթ աւելի կը չահին : Անգղերէն, Գերմաներէն եւ Սպաներէն գիտցողները կարող են քննութիւն անցնել, որոնց համար ստացուած նոթերը բուն նիւթերու նոթերուն վրայ կ'աւելցուին :

Էթոլ Սանքրալ մասնաւոր ընկերութեան մը պատկանելուն՝ տարեթոշակը բաւական սուղ է . առաջին տարիին համար 900 Ֆրանք . իսկ երկրորդ եւ երրորդ տարիներուն 1000_ական Ֆրանք : Գործնական աշխատութիւններու ծախքը վարժարանին վրայ է . բայց զպրոցական նիւթերն ու առարկաները՝ աշակերտները պարտին մատակարարել : Քանի մը տարիէ ի վեր վարժարանը վերաշինուած լի-

նելով լաւ կը համապատասխանէ ճարտարարուեստի արդի պահանջներուն . ունի 60 ուսումնասարհներ , 3 ամփիթատ-րոններ եւ շապոտարուստ :

Երկրորդ տարիի կէսէն սկսած՝ աշակերտները պարտին իրենց ընտրութիւնն ընել հետեւեալ ճիւղերու մէջ . Մեքե-նագէտ [mécanicien], ճարտարապետ [constructeur], Քիմիա-գէտ [chimiste] եւ Հանքահան—Մետաղագործ [mineur—metal-urgiste] . Ուսումնաւերջի վկայականը, սակայն, հետեւեալ ընդհանուր յիշատակութիւնը կ'ընէ միայն, —Տիփոլոս սիւ-փերիկոն սե գ'Ար գ'ե Մանիւֆաքթիւր :

Աշակերտներն ամեն շաբաթ հարցաքննութիւններ կ'անցնեն . ասոնց մէջ իրենց չահած՝ ինչպէս նաեւ արձա-կուրդի միջոցին ըրած աշխատութիւններու նօթերը կ'ա-ւելցուին ընդհ. քննութիւններու եւ ելքի մրցումին նօ-թերուն վրայ . ու այս ամենին գումարէն՝ զպրօցի վար-չութիւնը կը կազմէ ելքի դասակարգութիւնը [classement de sortie] .

Փոհացուցիչ նօթեր ստացողները՝ ինչպէս ամբողջ շըր-ջանին՝ նոյնպէս ալ ելքի մրցումին մէջ , կ'արժանանան Բարձրագոյն վկայականի . իսկ անոնք որ բաւականաչափ չեն յաջողիր՝ իրենց կարողութիւնը կ'ապացուցուի մինչեւ որոշ աստիճան մը , որուն համար կ'ստանան պարզ հաս-տատագիր [certificat d'éludes] մը : Բարձրագոյն վկայակա-նի համար վճարելու է 100 ֆրանք , իսկ միւսին՝ 50 ֆր. միայն : [*]

Փարիզ

[*] Յառաջիկայ թիւով Առեւտրական վարժարաններու վրայ պիտի խօսուի : — Անոնք որ կը փոփոխի ին ռանրանասեղ-դէկոմքիսներ ունենալ ֆրանս . այս կաւ այն կրքսիսն հաս-սասուքեան վրայ , կրեան դիսեղ Հաժալսարանի խնքագու-քեան . որկելով միելունյն ոսեան 2 ֆրանսի գուեար ըը իրենց դրկուելիք ծրագրի եւ փոխանակուած քղքակցութիւններու ծախ-եռու փոխարեան :

հ . Ծ .

ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ՃԱՄԲՈՐԴԸ

Գանի մը եջ

ՄԱՏՈՒ ՅԻՇԱՅԱԿԱՐԱՆԷՆ

Զմեռուան ցրտասառսուռ օր մը, սենեակիս մէջ առանձնացած՝ կը կարգայի Բիեռ Լօդի-ի հետաքրքիր հատորներէն մին: Յանկարծ երկու մեղմ հարուածի ձայն կարծեցի լսել դուռին վրայ: Մենութեանս մէջ խանգարուած լինելուս դժգոհ՝ գնացի բանալու...

Սեւ, աղտոտ վերարկուի մը մէջ կծկտած՝ կ'արձանանար հոն, առջեւս, բաւական տարիքոտ կին մը, որ, իր դառամած ու մեղրամոմի պէս դեղին դիմագիծով, գերեզմանէն փախած մահաստուերի մը սոսկումն ու դիակի մը գալչանքը կ'ազդէր ինձ... Կանի մը վարկեանէ ի վեր կը սպասէի արդէն որ խօսի. բայց կարծես թէ իմ ներկայութիւնէս անդամալուծուած, լեզուն կապկպուած, ոչ կ'երերար եւ ոչ իսկ ձայն կը հանէր: Աչքերս իրեն վրայ սևեւում, անհամբեր հարցուցի թէ ինչ կ'ուզէ: Պատասխան չկայ. միայն սեսայ որ այդ էակը կը շարժուէր... ու վերջապէս թեւին տակէն գզգզուած, ցեխոտած քուրջերու փաթթոց մը հանելով, դարձեալ անխօս, ինձ երկնցուց: Տեսակ մը նողկանքով առի ծրարն ու արհամարհանքով սկսայ նայիլ. մինչդեռ, անծանօթ կինը մատը բերնին մօտեցուց ու գինովի մը դանդաղութեամբ հեռացաւ:

Երբ առանձին մնացի, վերջ տալու համար այս հանելուկին, մատիս ծայրերով բացի ծրարը, եւ սեսայ դեղնած ու փոշեթաթաւ գէզ մը թուղթերու, որոնց առաջին երեսին վրայ ուշադրութիւնս գրաւեցին, խոչոր տառերով «ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ՃԱՄԲՈՐԴԸ, գրեց ՄԱՏՈ» բառերը, որոնք ժամանակի ազդեցութեան տակ կիսով չափ ջնջուած էին արդէն: Այլ միեւնոյն անտարբերը չէի. իմ մէջ ծնած էր հիմա, սաստիկ հետաքրքրութիւն մը՝ որ կը զրդէր ինձ ճանչնալ անծանօթը:

Միւս բոլոր զբաղումներս մէկդի թողած, երկու ամբողջ ցերեկ, ու գիշերներուս մեծ մասը զոհեցի՝ կարդալու այդ ձեռագիրը, որմէ կ'ընդօրինակեմ քանի մը գեղեցիկ էջ՝ Հատկապատմանի մէջ հրատարակելու համար:

« . . . Երկար ու տաժանակիր ճամբորդութիւնէ մը վերջ ,
յանկարծ ինքզինքս գտայ ընդարձակ անապատի մը մէջ :
Եղանակն ամառ էր ու ժամանակը՝ կէսօր : Սրեւը կրակ ու
բոց կը տեղար գլխուս . ու անոր ճառագայթները , հրաշէկ
ասեղներու նման , միտս կը ծակծկէին ու կը տաղէին .
մինչդեռ , գետնի վրայ , մանր խիճերու մէջ ցան ու ցիւր
որձաքարերը կը պսպղային բիւրեղի մը լուսաբեկբեկ ցոլ-
քերով : Սաստիկ յոգնած էի : — Երեւակայեցէք որ քսան եւ
հինգ տարիէ ի վեր կը քալեմ , կը քսլեմ ու կը քալեմ չա-
րունակ , ամառ ու ձմեռ , գիշեր ու ցերեկ՝ անընդհատ , ա-
ռանց վայրկեան մը նոյն խակ կանգ առնելու . . . սակայն
առաջին անգամն էր որ գաղտփար ունեցայ յոգնութիւն
ըսուած բանին վրայ : — Զգեստներս ծուիկ ծուիկ եղած՝
հալ ու մաշ մարմնիս վրայ՝ անկարող էին այլևս զիս պաշտ-
պանելու տաքին ու ցուրտին դէմ . ու պատուած կոշիկ-
ներուս ծերպերէն ոտքերս աւազին մէջ ու աւազներն ոտ-
քերուս մէջ կը խրուէին : Ու այս ամենին վրայ աւելցու-
ցէք նաեւ անօթութիւնն ու ծարաւը . . . Ուրիշ անգամներ
ալ անօթի մնացած էի՝ մինչեւ երեք չորս օր . բայց այդ
քանը բոլորովին անտանելի չէր ինձ , որ ամբողջ կեանքիս
մէջ , առանց հանգիստ ու դադար առնելու , առանց հրճ-
ուանքի ու խնդութեան բոպէ մ'անցնելու , կանուխէն որք
մնացած , միշտ զրկանքներու ենթակայ , միշտ տառապած ,
արդէն սովոր էի հաց չեղած տեղը խո՛տ ծամել , ու խոտ
չեղած տեղն ալ . . . մատե՛րս ծծել . բայց ծարաւիս երբեք
չեմ կրցած դոհացում , յագուրդ տալ այդչափ դիւրին մի-
ջոցներով . ան միշտ մնացած է իմ համակ էութեանս մէջ
յաւիտեանական կրակ մը , որ իր լափլիզող բոցերով , վա-
ռած է սիրտս , ցամքեցուցած՝ երակներուս բոլոր արիւնն
ու , շտտ անգամ , ուժասպառ ձգած զիս ճամբաներուն վրայ :
Իսկ այս անգամ , բոլորովին յուսահատական էր վի-
ճակս . լայնատարած անապատը , որուն մէկ ծայրը հորի-
զոնի անհունութիւնը կը գրկէր , կը սարսափեցնէր զիս .
բերնիս մէջ թուքս չորցած , լեզուս լեղակ դարձած , ան-

կարող էի նոյն իսկ շնչելու . . . Մխիթարութիւն մ'ունէի միայն, մտարերելով որ ես միակը չեմ. որովհետեւ կ'ըսեն՝ թէ, առհասարակ, մարդ էակը մշտնջենապէս գերի է ծարարին, որ օրօրոցէն կը սկսի տիրապետել անոր, ու կը լկէ, կը չարչրկէ զայն, առանց երբեք լիաշուրթն գոհացում ստացած լինելու, մինչեւ գերեզմանին դուռը:

Մէկ կողմէն, այս մտածումով սիրտ ու հոգի առած, միւս կողմէն ալ, մղուած զիս սուղորդ պապակէն, սկսայ թափառիլ անապատին մէջ՝ ջուր փնտռելու . . .

Ա՛խ, եթէ ինծի կաթի՛լ մը ջուր տուող լինէր այդ վայրկեանին . . .

Բայց կաթիլ մը ջո՛ւր . . . անապատի՛ն մէջ . . . ամա՛ւր . . . կէսօրի՛ն . . . :»

*
*
*

« . . . Չեմ կրնար բնել թէ օրուան ո՛ր ժամն էր: Սաչափ միայն գիտեմ որ, արեւը գլխուս վրայէն շատ վար իջած էր արդէն, ու անապատի աւաղները հնոցէն նոր ելած կրօքարերու չափ այրող էին. ու ես, քանի կը յառաջանայի, աւելի ու աւելի կը խորասուզուէի աւաղին մէջ, որ, այս անգամ, գիապարտներու մարմինը գրոշմող խանձերկաթին նման, խորունկ խոցեր կը բանար կիսամբերկ ու անպաշտպան սրունքներուս վրայ . . . :

Աչքերս, երկարատեւ յոգնութիւնէ ու տքնութիւնէ քունքերուս խորը քաշուած, ու մանաւանդ խաւարած՝ բոցածաճանչ լոյսի շլացնող հեղեղներուն տակ, հազիւ թէ կը նշմարէին անհուն միապաղալ կոպոյտը, որ, կափարիչի մը պէս, կը ծածկէր ովկէան անապատի անսահման գորշութիւնը, որուն անչարժ ու անկենդան մակերեսին վրայ, կէս մը միայն կար. — անդոյն ու անձեւ կէտ մը, որ կը շարժէր, որ կ'ապրէր . . . :

Ես էի այդ չարժուն, կենդանի կէտը, որ հայառայ ամէն արգելքի, ողի ի բռին, կը յառաջանայի հաստատակամ քայլերով, շուրջս տիրող գերեզմանական խուլ ա-

մայութեան ու մեռելական արուար լուսութեան մէջ: Ինչո՞ւ . . . — Ձեմ գրտեր: Ո՞ւր . . . — Ո՞ւր կ'երթայ ամբողջ մարդկութիւնը . . . ո՞ւր կ'երթայ կենդանական աշխարհը համակ, որ յաւիտենական դարերէ ի վեր կը քալէ շարունակ . . . և ինչո՞ւ . . .

Հարցում մը, զոր կ'ուղղեմ միշտ, ամէն տեղ, ամէն քայլափոխիս, քարերուն, աւազին, լեռներուն, աստղերուն, երկնքին, օդին, ջուրին, արեւին . . . և այն ամէն բաներուն, որոնց կը հանգիպիմ ճամբուս վրայ, ոտքիս տակ, գլխուս վերեւ, աչքերուս առջև, մտքիս սաւառնումներուն մէջ ու երազի ու բանդազուշանքի ժամերուս . . . »

ՄԱՄՈՒԼԻ ՎՐԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա մ փ ո փ ե ց

Ն Շ Ա Ն

Ա

ՇԵՂՈՒԿ ՕՂԸ

Օգը հեղուկի կը վերածուէր բաւական երկար ատենէ ի վեր: այդ բանին սկզբունքը կը գտնենք քիմիաբանական տարրական գրքերու մէջ իսկ. սակայն մեծ քանակութեամբ հեղուկ օդ արտադրելու գաղափարը նորագոյն է: Այս տարրի, յունիսին, Շուէտցի Պ. Օսդերկրէն այդ բան յաջողցուց Ամերիկայի՝ Նիւ-Եօքս քաղաքին մէջ:

Իր պատրաստութեան սկզբունքը. — Ան իր սանդղոց մտքի կորովէն թելադրուած, շիներ է 100—120 ձիու ոյժ ունեցող մեքենաներ օր, թանձր գլաններու մէջ, 600 քիւս

ծանրութեամբ ճնշում յառաջ կը բերեն՝ երբ շարժումի կը գրուին: Միջնորդաական օգը, այդ գլաններու մէջ մըտնելէ առաջ յարմարցուած գործիներու միջոցով, կը մաքրուի իր աղտոտութիւններէն եւ, մէկ գլանէն միւսն անդամ պահուն, կը զովանայ սովորական եղանակով: Մէկ կողմանէ, հետզհետէ, ճնշուած օդին բարեխառնութեան աստիճանը նուազեցնելով, միւս կողմանէ ճնշող ոյժը կը բինապատկելով, վերջապէս օգը կը խտանայ եւ հեղուկի կը վերածուի. մնթոտ մը՝ որ թէեւ նորութիւն մը չէ, սակայն իր մանրամասնութիւններու մէջ կատարեալ եւ յոգութեան մէջ անվիճելի: Այնպէս որ Պ. Օսդերկրէն իր մեքենաներով կըրցու հինգ ժամ առատօրէն հեղուկ օդ հոսեցնել: Պայման դրած է՝ ուրիշ քաղաքի մը մէջ եւս գործարան մը հիմնել, որ պիտի կարենայ օրական 3500 քիւս հեղուկ օդ արտադրել:

Իր բարեխառնութեան աստիճանը. — Փարէնհայթի ջերմաչափով, սառոյցը հալեցնելու եւ շոգիացնելու համար, 180 աստիճան ջերմութիւն հարկաւոր է. մինչդեռ հեղուկ օդն իր կազային վիճակը վերստանալու համար 400 աստիճան ջերմութեան կը կարօտի. այնպէս որ, երբ օդային հեղուկը միջնորդոտին հետ հաղորդակցութեան դրուի, հետզհետէ, կազային վիճակի վերածուելով՝ անոր ջերմութիւնը կը խլէ եւ բարեխառնութիւնը զգալի կերպով կը նուազեցնէ: Սառոյցի վրայ եթէ քիչ մը հեղուկ օդ թափենք, այս վերջինը կ'սկսի եռալ, ինչպէս ջուրը կրակին վրայ. որովհետեւ 38 աստիճան ջերմութիւն ունեցող օրուան մը մէջ, օդային հեղուկը գերօջէն 400° (Փարէնհայթ) պակաս կը նըշանակէ եւ սառոյցն ալ 0°:

ԻՐ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Անրան խղղղ սախը ջնջուած. — Բիչ առեմէն, օդային հեղուկին չնորհիւ, պիտի ունենանք, այսպէս, տուններու, սենեակներու եւ գործարաններու մէջ, ամառնային սաք եւ հեղձուցիչ ջերմութիւններու միջոցին, ո՛չ միայն զով եւ անուշ օդ մը, որուն աստիճանը պիտի կանոնաւորենք մեր ուզածին պէս, այլ եւ մաքուր եւ զերծ տարափոխիկ հիւանդութիւններու միջբողմներէն. որովհետեւ այդ մակարոյժներ չեն կարող ապրիլ օդային հեղուկին 400° ցրտութեան մէջ:

2. Ուտեյիներու պահպանումը. — Օդային հեղուկը, մասնաւոր ամաններու մէջ գրուելով՝ կարելի է՝ արտաքին ջերմութեան ազդեցութիւնէն զերծ պահել քանի մ'օրեր

եւ մինչեւ իսկ շարաթ մը . յատկութիւն մը՝ որ իր փոխադրութիւնը քաղաքէ քաղաք կը դիւրացնէ . ու այսպէս, ան սառույցի տեղը պիտի բռնէ օդատակար կերպով : Կազային վիճակի վերածուած պահուն, ըլլալով չոր, օդային հեղուկի ցրտութեան մէջ պահեստի գրուած պտուղները չպիտի աւրուին եւ ոչ ալ նեխին . ինչ որ յաճախ կը պատահէր երբ անոնք սառույցի մէջ կը պահուէին, այս վերջինին արտադրած գազը խոնաւութեան պատճառով : Դարձեալ, սառույցը փոխադրութիւններու ատեն անագին տեղ կը բռնէր՝ երբ իբր զովացուցիչ կը ծառայէր, եւ անագին դժուարութիւններու տեղի կուտար, օդային հեղուկը աժանագին ըլլալով մէկտեղ դիւրատար է . թողունք յիշել իր այն առաւելութիւնը, որով՝ իր մէջ պահուած ուտելիքներու վրայ փակած բուսական եւ կենդանական սերմերը կ'սպաննէ . ու, իր չորութեան շնորհիւ ալ, պրտուղներու զօրացուցիչ եւ զովացուցիչ յատկութիւնները կ'աւելցնէ :

3. Արհեստներու յեղաշրջումը .— Շոգեշարժական միջինաներն եւ ելեքարական կառքերն այլեւս հեղուկ օդով պիտի քալեն : Վառելի նիւթերով բեռնաւորուած նաւեր պայթումի վտանգէն զերծ պիտի մնան : Նաւահանգիստներն եւ սահմանադրութիւնները պիտի պահպանուին օդային հեղուկով շինուած թնթանօթներով, որոնք պիտի զերազանցեն պայթուցիկ նիւթերու եւ ճնշուած օդի բոլոր հիմակուան գրութիւնները : Նաւերը՝ հարկ եղած պահուն, հեղուկ օդ ունենալու համար, բաւական է որ ունենան աժանագին եւ դիւրակառույց պղտիկ գործարաններ որ, խիստ կարճ ժամանակի մէջ, միշտ անկից պատրաստեն : Այս կերպով, այլեւս անպէտք կը դառնան պատերազմական նաւերու մէջ՝ անագին քանակութիւնով վառօթի եւ ուրիշ պայթուցիկ նիւթերու շտեմարանները, որոնց ներկայութիւնն այնքան վտանգաւոր է եւ պահանջած ծախքն անագին :

4. Բանեւրի [cancer] Բուժումը .— Տօքթէօն Campbell wite, հեղուկ օդի անհերքելի ազդեցութիւնն ապացուցած է նիւ-Շօրքի մէջ քանսէրի վրայ : Այդ հիւանդութեան աճումը կը դադրի, երբ, ան 0° էն 312 աստիճան (Փարէնհայթ) պակաս ցրտութեան կ'ենթարկուի, ու անկէ վարակուած հիւսուածները [tissus] գրգռուելով [par stimulation] կը կենդանանան եւ կը վերակազմուին :

Օդային հեղուկի բարեխառնութեան աստիճանը մար-

գունէն 400՝ վար ըլլալով, անիկա յառաջ կը բերէ յանկարծական եւ սաստիկ սարսում [ébranlement] մը, որ եւ է անդամին վրայ, առանց հիւսուածներուն ընդհանուր գործարանաւորութեան վնասելու: Մէկ երկու երկվայրկեան հարկաւոր է ամենէ ոյժգին ցուրտն արտադրելու՝ նոյնքան ալ պաղած անդամը՝ իր բնական բարեխառնութեան մէջ գննելու. այնպէս որ այս գործողութիւնը քանի մը անդամներ յաջորդաբար կրկնելով, կարելի կը լինի, զուտ անգական՝ խոշոր գրգռում մը յառաջ բերելու: Նեարդերը [fibres] բռնապրօսիկ կը կծկին, ինչպէս նաեւ՝ մինչեւ ծայր աստիճան՝ արեան խողովակները. բայց ընդլայնելով այնքան ուժգնութեամբ՝ երբ այն ինչ օդային հեղուկը գործելէ դադարած է:

Մինչեւ հիմա, քանսէրը վիրաբուժական գործողութեամբ կը դարմանէին, երբ անիկա իր սկզբնաւորութեան մէջ էր. բայց պէտք է գիտնալ որ այդ գործողութիւն կը կատարուէր երբ քանսէրի տեղը յարմար էր ատոր. ու շատ անգամներ ալ գործողութիւնէն յետոյ, հիւանդութիւնը վերստին կ'երուէր իր բուն՝ կամ բոլորովին տարբեր տեղ մը. օդային հեղուկն այդ հիւանդութեան բուժումին մէջ զննատեսիլ գեր մը կ'ստանձնէ այն պատճառով որ, կարելի է կիրարկել զայն ուր որ ալ այդ հիւանդութիւն գրտուի. տեղ մը՝ որ յաճախ վիրաբուժական գործիներու հասողութեան մէջ չի գտնուիր:

Ռըվիւ սէ Ռըվիւի աշխատակիցներէն մէկը՝ կը հաւատայ որ ֆասներրորդ դարը, որուն սեամին վրայ կը գըտնուինք, պիտի լինի օդային հեղուկի դարը: Վիրաբոյժներն ապահով կերպով պիտի կատարեն իրենց գործողութիւնները. զմոսուսները յաջող արդիւնքներ պիտի տան՝ հիւսուածներու տարբազարումն արգիլելով. պաղավաճառները, բոլոր եղանակներու մէջ, իրենց յաճախորդներու թարմ եւ առողջ պտուղներ պիտի ներկայացնեն. եւ — ո՞վ գիտէ — երկարակեցութիւնն եւս հաւանական է որ անկէ օգտուի, եւ գուցէ, հին դարերու ձեռագիրները պրպտող մը, օր մը մեզ ծանօթացնէ՝ թէ դիպաբանական այն հոչակաւոր աղբիւրը՝ զոր Արամազդ կանգնեց կերպարանափոխելով Jouvence սիրուն յաւերժահարսը, անոր տալով այն առաքինութիւնը՝ որով պիտի երիտասարդացնէր ամեն անոնք որ իր ալիքներու մէջ պիտի լողանային, ուրիշ բան չէր: Բայց եթէ հեղուկ օդն ինքնին:

ԼԵՌՆԱԶԱՐՈՒԹԻՒՆ

[MAL DE MONTAGNE]

ԻՐ ԴԱՐՄԱՆԸ

Ինչպէս ծովահարութիւնը (mal de mer) — ծովէ բունը — հետեւանք է ճանապարհորդներու, նոր եւ անվարժ մթնոլորտի մը տակ գտնուելուն գլխաւորաբար, նոյնպէս ալ լեռները՝ լինելով բոլորովին տարբեր կենցաղալայրեր այն էակներու համար որ գաշտային կեանքի վարժուած են, կը թողուն այս վերջիններու վրայ՝ համանման հիւանդագին տղաւորութիւններ: Լեռներու ինչպէս մթնոլորտը նոյնպէս ալ հողը՝ կը տարբերին բոլորովին գաշտայիններէն: Հողը, անտեղ ծածկուած լինելով ծառերով եւ յաճախ ձիւնով, բոյսերը լաւ չեն աճիր. մթնոլորտի յատկութիւնները կը փոխուին, որովհետեւ իր ճնշողական ոյժը բազմապէս քիչ է: Մթնոլորտական ճնշումը՝ որ 76° սանդիմետր է ծովի մակերեւոյթին վրայ՝ իւրաքանչիւր 100 մետր բարձրութեան 1 սմ. կը տկարանայ գրեթէ, ինչպէս Մօն-Պլանի (4810 մետր) գագաթը 38° սմ. միայն կը նշանակէ ծանրաչափը [baromètre] եւ Էվէրէսթի (8840) բարձունքներուն մէջ 24° սմ.:

Ճնշողական ոյժին նուազումին հետ, աստիճանաբար կը տկարանայ նաեւ օդին խտութիւնը՝ հետեւաբար իր տեսակարար ծանրութիւնը [densité]. Մէկ խորանարդ տեսիմետր օդը, որ 1 կր. 293 կը կշռէ ծովին մակերեսին վրայ, Մօն-Պլանի գագաթը 0 կր. 646 կը կշռէ միայն. ճիշտ առաջինին կէսը. որովհետեւ այս վերջին վայրին մէջ, մթնոլորտական ճնշումը փոխանակ 76° սմ. ի, ինչ որ է ծովին վրայ, 38 սմ. է, այսինքն անոր կէսը: Ասկէ կը հետեւի որ օդն աւելի թեթեւ է բարձրութիւններու մէջ կամ լեռներու վրայ: Այս թեթեւութիւն արդիւնք է, բնականաբար, օդին անօսրութեան. բան մը որ իրեն մասնաւոր յատկութիւններ կուտայ, որոնցմով կը ներգործէ մարդոց եւ կենդանիներու առողջական վիճակին եւ իրենց գործարանաւորութեան վրայ:

Լեռներու օդը, իր թեթեւութեան կը միացնէ ուրիշ

յատկութիւն մը, մաքուրքիւնը: Երբեմն կը կարծուէր թէ ասոր պատճառն անխածինի [anhydrite carbonique] նուազութիւնն էր. սակայն վերջերս ապացուցուեցաւ որ ատրկա բոլորովին սխալ է: Օդի բազադրութիւնը, ինչպէս քաղաքներու, նոյնպէս ալ լեռնային բարձրութիւններու մէջ միեւնոյն համաքանակ տարրերը — թթուածին, անխածին եւ բորակածին — կը պարունակէ: Արդի վերլուծական տարրաբանութիւնը դայդ լիովին կ'ապացուցանէ:

Բարձրութիւններու մէջ օդը մաքուր է. որովհետեւ փոշի եւ անտաւոր սերմեր չի պարունակեր: Քաղաքներու մթնոլորտն ունի, իբ մէջ, ո՛չ միայն ամեն տեսակ նիւթերու մասնիկներ, այլև մանրադիտական կենդանիներ, միքրոպներ: Փոշին ցածերը կը մնայ միայն, 100 մետրէ աւելի չի բարձրանար. որովհետեւ օդը, հետզհետէ, անսորանալով՝ անկարող կը լինի առկախ պահել այդ ծածանող մասնիկները: Բասթէօն, առաջին անգամ, հաստատեց այդ անլիճելի ճշմարտութիւնը՝ 1862-ին: 2—4000 մետր բարձրութիւն ունեցող տեղերու օդը՝ երեք խորանարդ մետր խուփ մը մէջ չի պարունակեր եւ ոչ մի բուսական կամ կենդանական սերմ, որ կարենայ անիլ կամ զարգանալ. մինչդեռ Փարիզի մէջ այդքան ծաւալով օդ կը պարունակէ 15, 000է աւելի միքրոպ: Վարակիչ սերմերէ զերծ լինելուն կը պարտին, անտարակոյս, լեռներն իրենց առողջարար յատկութեան համբաւը: Հոն վարակումի երկիւղ չկայ. միքրոպային հիւանդութիւնները, այնտեղ, հազուադէպ են. քաղաքներն ամայացնող թոքախտը՝ ոչ միայն կը խնայէ բարձրաւանդակ երկիրներու բնակիչներուն, այլ եւ մաքուր օդին ազդեցութեան տակ կը բուժի:

Երրորդ յատկութիւն մը եւս լեռնային մթնոլորտին չորութիւնն է: Իարնան եւ աչնան միշտ տեղացող անձրեւները լեռնային օդին խոնաւութիւնը կ'աւելցնեն. բայց ստառն ու ձմեռը, այնտեղ, առ ի չգոյ է անձրեւի, չոր է. յատկութիւն՝ զոր օդը կը պարտի իր անսորութեան ալ. որովհետեւ դատարկութեան մէջ ջուրը կը չզգիսայ արագութեամբ:

Այս չորութեան հետեւանքով է որ լեռնաբնակներու մազերն ու մօրուքը խիստ կարծր կը լինին. չորիացումի արագութիւնը կը ճեղքէ մորթն եւ լորձնաթաշանթները, ու աչքերու եւ կոկորդի կակձանքներ [picotement] յառաջ կը բերէ. նոյն իսկ, չրթունքներու վրայ պղտիկ արիւնհոսութիւններ կը պատահին: Այդ վերջին պատահարը, որ

միայն հետեւանք է, ինչպէս տեսանք մթնոլորտին չորութեան, յաճախ սխալումներու տեղի տուած է, — որպէս թէ նկշողական զօրութիւնը, յեռներու մեջ, սխալ լինելով իր ոյժն անբարակակն ըզարտ արիւնն իր խողովակներուն մեջ պահելու :

Գիտենք որ մէկ քառակուսի սանդղմեթր արամագիծով խողովակի մը մէջ, մթնոլորտական ճնշումը 76 սմ. բարձրութեամբ սնդիկի սիւնակի մը ծանրութեան հաւասար է. այդքան սնդիկը կը կշռէ 1, 03 քիլօկրամ. մարդուս մարմինին մակերեսը լինելով, միջին հաշուով 14, 500 սմ. քառակուսի, հետեւաբար իր վրայ մթնոլորտական ճնշման ծանրութիւնը պիտի լինի մօտաւորապէս 15, 000 քիլօկրամ. ուրեմն, իւրաքանչիւր անգամ երբ ծանրաչափը 76 սանդղմեթրէ մէկ աստիճան պակաս կամ աւելի նշանակէր՝ մեր մարմինին վրայի ճնշումէն 157 քիլօ պիտի պակսէր՝ կամ աւելնար : Այս ֆիզիքական օրէնքին մեքենականութիւնն ի նկատի ունենալով էր որ կ'ըսէին թէ. «Երբ մթնոլորտական ճնշումը ակարանայ՝ մարմինը կը դառնայ տեսակ մ'ընդարձակ առածիզ [ventouse]. սրտին գործողութիւնն այլեւս բաւականաչափ կիրպով հակալիշուած չլինելով մորթէն ու լորձնաթաղանթներէն արիւնհոսութիւններ տեղի կ'ունենան : » Բայց սխալն անհեթեթ էր. որովհետեւ գիտենք միւս կողմանէ թէ, Փասկալի օրէնքին համեմատ, որ եւ է ճնշողական զօրութիւն հեղուկ մարմիններու բոլոր մասերուն մէջ հաւասարապէս կը տարածուի. արիւնը հեղուկ մարմին մը հետեւաբար անճնշելի լինելով՝ երկակայ է միեւնոյն օրէնքին. ասկէ կը հետեւի որ մթնոլորտական ճնշումի փոփոխութիւնը այդ երկուոյթին պատճառը չէ :

Եթէ մեքենական այդպիսի յանկարծական հետեւանքներ տեղի կ'ունենան, Փօլ—Պէր ցոյց տուած է որ ասոնք արգասիք են լոկ մթնոլորտական ճնշումի փոխոխուելին եւ այս վերջինին արագութեան միայն : Այս ըմբռնում պարզ է եւ ընդհանուր :

Հակառակ չորութեան պատճառած մորթի ճեղքատուքներու, կակժանքներու եւ արիւնհոսութեան, օդին այդ յատկութիւն, յաճախ, բարերար հետեւանքներ կ'ունենայ, — չափազանց արատթորումներ, ուղեղային եւ պարզ հարբուխներ կը ցամքին :

Թեթեւութիւն, մաքրութիւն եւ չորութիւն, օդին այդ երեք յատկութիւններո՞ կը բացատրուին թէ ինչպէս, յաճախ, մարդու աչքը կը խաչուի հեռաւորութիւններու

ճշմարիտ սահմանը չափելու: Լուսթիւնը, լեռներու մէջ, խորին է, ո՛չ թէ աղմուկի գլխաւոր պատճառները ջնջուած լինելուն համար, այլ նոյն խկ օդին անօսութեան հետեւանքով. որովհետեւ այդ վիճակի մէջ ձայնի ալիքները խիստ գէշ կը կազմուին եւ կ'առաջնորդուին: Կալով թէ ձմեռը, լեռներու մէջ տաք՝ եւ ամառը զով կ'ընէ, հասկընալի կը դառնայ, երբ նկատենք թէ գարունը լեռներու ձմեռն է. որովհետեւ, ինչպէս ըսինք, գարուն եւ աշուն, այնտեղ, անձրեւոտ են, ու, այդ պահուն, պէտք է լեռներէն խոյս տալ. քանի որ ճշմարիտ ձմեռը չոր ցուրտին մէջ չի կայանար, այլ խոնաւ ցուրտին: Ձիւնը, որ ծածկած է գետինը, չոր կը պահէ զայն եւ կ'անդրադարձնէ արեւին ջեռուչիչ ճառագայթներն օդին մէջ. ու մարդը, որ հոն կը շրջի, կը ծծէ անոր ջերմութեան թրթուսներն եւ կը տաքնայ. ճիշտ ճիւղի վրայ ինկած այն փայտի կտորին պէս՝ որ, հետզհետէ, կը խորասուզի անոր մէջ զայն հալեցնելով՝ իր ծծած ջերմութեան չափով: Կիչերն իսկ, կարելի է, առանց անպատեհութեան, լեռներու մէջ, գուրսը շրջիլ. որովհետեւ օդին չորութիւնն ու իր ջերմութեան վատ հաղորդիչի մը յատկութիւնն արդելք կը լինին որ խոնաւութիւնն իր ցուրտն ազդէ: Չոր օդը մեզմէ քիչ տաքութիւն կը խլէ, որովհետեւ իր ջերմածծական կարողութիւնը խիստ տկար է. մինչդեռ խոնաւ օդը՝ իր մէջ պարունակած ջուրին միջոցով, որուն այդ կարողութիւնը մեծ է, մեզմէ շատ տաքութիւն կը վերցնէ. խոնաւ օդը մինչեւ մեր ոսկորները կը թափանցէ եւ մեզ կը վնասէ:

Լեռնային օդի առողջարար ու բուժող յատկութիւններու վնասողները հովն ու խոնաւութիւնն են: Լեռներու մէջ հաստատուած բնակավայրերու դիրքը պէտք է այնպէս մը լինի, որ անոնք պահպանուին այդ ապառոջ ազդակներու՝ եւ մանաւանդ հիւսիսային հովին դէմ: Ինչ ինչ բնական պայմաններ, — ժայռեր, եղեւնիներու (չամ աղածը) անտառներ — այդ պէտքը, յաճախ, կը լրացնեն: Եթէ ուզուի առողջապահական բոլոր պահանջումներու համապատասխանող բնակավայր մը ունենալ, պէտք է որ անիկա հաւասարապէս պահպանուած ըլլայ բուքէն, ցուրտէն, տաքէն եւ լինի ուրախ ու հանգստաւէտ: Այս բոլորն իրականացնող տեղ կարելի չէ գտնել, բայց քիչ թէ շատ մտտիկ տեսակ տեղեր հազուադէպ չեն:

Աւստրիայի Քարնիոլեան լեռներու մէջ, կը գտնուի նշանաւոր կայարան մը, Ռիխլի, ուր կը գործադրուի յոյսի

քուժադարմանի գրութիւնը, որ բարձրաւանդակներու դարմանութի տեսակ մ'է: Մարմինը՝ բոլորովին մերկ, արեւին եւ օդին փոփոխականութեան կ'ենթարկեն. գրութիւն մը՝ որ Կնայքի ջրարուժական մեթոտին չափ համարա կը վայելէ ինչպէս Աւստրիայի նոյնպէս Կերմանիայի մէջ: Իրօք, բուժադարմանութեան այս բնական եղանակը կը պարունակէ, ջրային գրութեան բարելաւիչ ամենէ հզօր ազդակները, — չորփանք արեւի եւ լոյսի մէջ, լողանք օդի մէջ, առանց նկատի առնելու անձրեւոտ օրերու ցնցուզաւոր լուացումը (douche):

Լեռնային կեանքը, երբ կը համապատասխանէ ցոյց տրուած պայմաններուն, կ'արագացնէ շատ մը հիւանդութիւններու բուժումը: Զմեռնային վայրերը խիստ օգտակար են նոր թոքախտէ բռնուողներու: Ստամոքսի, արեան ննւազուժ պատճառող հիւանդութիւններէ՝ ինչպէս նաեւ ապաքինութեան շրջանի մէջ տառապողներ պէտք է՝ իրենց ամենէ մեծ բժիշկը, լեռներու օդին մէջ փնտռեն: Այսօր, հաստատուած է որ լեռնային օդը կը հարստացնէ արիւնը եւ կը բազմացնէ անոր կարմիր գնդիկները: Նոյն բոկ յառաջացած հիւանդութիւններու համար խիստ նպաստաւոր է լեռան կեանքը:

Երբ մէկ կողմէ լեռան օդն իր բարերար ազդեցութիւններն ունի, միւս կողմէ, ինչպէս տեսանք այս յօդուածի սկիզբը, բարձր վայրերու մէջ ապրելը, նոյնպէս միտոլորտի մէջ համբարձումները, յառաջ կը բերեն հիւանդագին արկածներ որ ճանչցուած են լեռնահարուրիւն (mal de montagne) — լեռնէ բռնուիլ — անուսին սակ:

Կը կարծուէր, երբեմն, թէ այդ հիւանդութիւն յառաջ կուգար թթուածինի [oxygène] նուազումէն. թթուածին որ ազդել է ամեն այրումի, որուն կ'ընկերանան ֆիզիքական եւ մտաւոր աշխատութիւններու արդաստորումը: Հիմալայա լեռներու եւ Ամերիկայի բարձրանդակներու վրայ բնակողներ, ենթակայ հետեւաբար, թթուածինի յարատեւ պակասին՝ խիստ ետ մնացած են քաղաքական, տնտեսական եւ ընկերական պոտմութեան մէջ, ինչ որ պատճառ եղած է իրենց բարոյական եւ ֆիզիքական վատթարացումին:

Բայց, այսպէս կարծողներուն ցոյց տրուեցաւ որ կենդանական թագաւորութիւնն ունի, թթուածինի այդ պակասին դէմ, պաշտպանումի միջոց մը. արիւնը կը ծծէ նուազ թթուածին բայց ատիկա հաւասարակշռելու համար

ազգու մեքենականութեամբ մը, թէեւ անծանօթ, արեան ծծիչ նիւթը—կարմիր նիւթը—կարմիր գնդիկները կը բազմանան. այնպէս որ, վերջապէս, ամեն բան յօգուտ գործարանաւորութեան կը վերջանայ: Ոչ միայն կլիմայի ընտելացում յառաջ կուգայ, այլև գործարանաւորութիւնը նոր ոյժ մը, եկամուտ մը ձեռք կը բերէ: Տարիքն առած կենդանիներու համար, այս արդիւնք ստանալու համար, երկու սերունդներ հարկաւոր են, մինչդեռ նորածին մը կըրնայ լեռնային կլիմային վարժուիլ՝ մէկ քսնի շարաթի մէջ:

Ահա այսպէս, կենդանիներու գործարանաւորութիւնը կը վարժուի լեռներու մթնոլորտական ցած ճնշումին, ու հետո կրաւորական կերպով թթուածինի անօսութեան ենթարկուելու, ան կ'աշխատի եւ կը յաջողի այդ աննպաստ պայմանին դէմ յաղթական կերպով կուտիլ: Արեան հալըստացումը, սեւայն, այս պարագային, վերջնական արդիւնք մը չէ. կը տեսէ ան որքան առեն որ բնութիւնը գայն արտադրից: Լեռներէ դաշտ իջնելը՝ արեան կարմիր գնդիկներու թիւն իր սոլորականին կը հասօցնէ:

Հիմա, այլևս, դիւրութեամբ, կրնանք հասկնալ գոյութիւնն այն արկածներու, որ տեղի կ'ունենան մթնոլորտի բարձունքներու մէջ օդապարիկով չըրողներու եւ լեռներու մէջ ապրիլ փափաքողներու վրայ: Այդ արկածներ արդիւնք են, լոկ, այն սուղ եւ կարճ ժամանակին, ուր կարելի չի կլիմայական րևիտացում ու արեան զեղիկներու եւ արտափն օդի պայտաններու մեջ հաւասարութիւն յառաջ բերել: Ահա թէ ինչու մեռան Չեկիք օդապարիկով 860) մեթր բարձրութեան մէջ չըջիլ ուզողներ՝ 1875-ին. ինչպէս նաև ուրիշներ որ այդպիսի յանդուգն օդային ճամբորդութիւններու ձեռնարկած էին:

Բարձրաւանդակ կլիմայի հիւանդութիւնը՝ անվիճելի նմանութիւններ ունի, ծովային հիւանդութեան հետ.— գլուխի պտտոյտ, փսխում, բարոյական եւ ֆիզիքական արկարութիւն, քմահաճ գրգռում եւ, վերջապէս, վայրկենական եւ անմիջական բուժում: Այս ջրային խառնակութեան կը միանայ, արեան չըջանաւորութեան մէջ խանդարում. սրտի բաբախումները կ'արագանան այնպէս՝ ինչպէս ջերմի եւ շնչահեղձութեան առեւն:

Փօլ—Պէր հաւանականօրէն հաստատած է, որ այս խանդարումներու առաջին պատճառը թթուածինի անմիջական նուազումն է, մթնոլորտին ճնշումին տկարանալուն եւ օդին

անօրանալուն հետեւանքով : Ուրիշներ կը պնդեն, վերջերս, թէ առիկա, արեսն մէջ, ամխածիւնի պահասին արգասիք է միայն : Այս վերջին տեսութիւնը, իրաւամբ նրկատել կուտայ Ռըվիւ սե Տեօ Մոնէի աշխատակիցը, կրնայ իր վրայ շատ մը ընդդիմախօսութիւններ հրաւիրել եւ, հետեւաբար, հետու է ընդունելի լինելէ :

4

ՄՈՒԿԵՐԸ ԿԸ ՏԱՐԱԾԵՆ ԺԱՆՏԱՒՏԸ

Հնդկաստանի եւ Չինաստանի ժանտախտի վերջին համաճարակներու միջոցին, դիտուած է որ մուկերը մեծ դեր կը խաղան այդ հիւանդութեան տարածումին մէջ : Ու, երբէն հաստատած է որ ժանտախտը, մարդոց հիւանդութիւն մը լինելէ առաջ՝ մուկերու համաճարակ մ'է արդէն : այնպէս որ անոնց ջնջումը՝ ժանտախտի դէմ լաւագոյն զգուշական միջոց մ'է :

Փորթուգալի մէջ, վերջերս պատահած ժանտախտին առթած սարսափին մէջ, շահեկանութիւնէ զուրկ չէր լինէր Հաւսպարանի ընթերցողներու ամիոփ գաղափար մը տալ, վերջին գիտական հետազոտութիւններու համաձայն, մուկերու այդ ախտին մէջ առած դերին վրայ :

1. Մուկերու գիակները քննելով, անոնց մէջ գտած են ժանտախտի պասիլը՝ երբ, առաջին անգամ, վարակումի քանի մը դէպքեր պատահած են այն քաղաքներու մէջ, ուր այդ գիակները քննուած են :

2. Հնդկական բոլոր քաղաքներու մէջ՝ մուկէն մարդը վարակումի յայտնի պարագաներ նկատուած են : Պօսպայի ինչ ինչ հաստատութիւններու մէջ, ուր մուկերու գիակներ գտնուած են, դիտուած է որ միայն այն մարդիկ վարակուած են ժանտախտէն, որոնք այդ գիակներու դպած են կամ զանոնք հաւաքած : մինչդեռ ուրիշ բազմաթիւ գործաւորներ, որ միեւնոյն ատեն հոն կ'աշխատէին, ոչինչ ունեցած են :

3. Յաճախ, այդ տարափոխիկ հիւանդութեան առաջին դէպքերը պատահած են այն շէնքերու մէջ, ուր պահուած են եղեր, ցորեն, դարի, բամպակի սերմեր եւ ուրիշ նիւթեր որ իրենց վրայ կը հրաւիրեն, առհասարակ, մուկերու ուշադրութիւնը՝ եւ պատճառ կը լինին անոնց ներկայութեան : Քիւրաչէ քաղաքին մէջ, ուր այս շտեմարաններն անբնակ վայ-

րերու մէջ կը գտնուէին, առաջին վարակուողներն եղած են անոնց պահապաններն ու գործաւորները :

4. Այն տուները, որ լաւ կառուցուած էին եւ մաքուր պահուած, այսինքն՝ մուկերու հոն սպրդումին զէմ պաշտպանուած, գրեթէ, ժանտախտէ զերծ մնացած են : Միեւնոյն բանը հաստատուած է նաեւ Ռէնիի եւ Քանդոնի՝ 1894-ի համաճարակի պահուն, այն բնակուիթիւններու մէջ՝ որ կը գտնուէին գետին վրայ խարսխուած նաւերու վրայ : Ընդհակառակը, տեսնուած է տեղացի աղքատներուն մէջ, համաճարակի ընդմիջտ ներկայութիւնը, հակառակ այն ամեն հականեխական զրուշութիւններու, որ գործադրուած են խնամքով, անոնց տուներու մէջ. որովհետեւ ասոնք միշտ ենթակայ էին մուկերու տարածումին :

5. Պոմպայի եւ ուրիշ քաղաքներու մէջ, մարդոց ախտաւորումը պատահեցաւ գլխաւորաբար այն տեղերու եւ փողոցներու մէջ, ուր մուկերու համաճարակ երեւան եկած էր : Եթէ ուրիշ փողոցներու մէջ եւս վարակում առաջ եկաւ, այդ լոկ արգասիք էր մուկերու գաղթումին եւ սատկուուն. ու տարածումի գիծն եղած է, միշտ, մուկերու գաղթումին ուղին :

6. Համաճարակի կից երկիրներու մէջ, հիւանդութիւնն երեւան եկած է առանց ո՛րեւէ վարակուողի հոն մտնելուն. բայց ախար միշտ իրեն կարապետ ունեցաւ ժանտախտաւոր վայրերու մուկերուն գաղթումը :

7. Շատ մը երկիրներու մէջ, ժանտախտն ընդհանրացած է՝ վարակուած տեղերէ փախչողներու մահէն գրեթէ մէկ ամիս յետոյ : Այդ միջոցին այդ հիւանդութիւն մուկերու մէջ մտած է, ու զանոնք վարակելէ վերջ, անոնցմով միայն մարդուն փոխանցուած է :

8. Վերջապէս քանի մը նաւերու վրայ ժանտախտի տարածումէն հաստատուած է որ մուկերը, հոն, վարակումի նախընթացներն եղած են :

Ինչպէս կը տեսնուի, մարդուն եւ մուկին ժանտախտէ վարակումին մէջ յայտնի եւ անհերքելի կապ մը կայ : Երկուքին ալ մակարոյծը միեւնոյնն է. կրնայ փոխանցուիլ մուկէն մարդուն, եւ ընդհակառակը. մէկը թէ միւրը կըրնան վարակումի սկզբնապատճառներ դառնալ, թէեւ հիւանդ մարդէն առողջին վարակումը յաճախակի չի լինիր : Մուկը, կը թուի թէ գլխաւոր եւ անհրաժեշտ միջնորդն է՝ ժանտախտը համաճարակի վիճակին մէջ գնելու :

Այս ծանօթութիւններէն կը հետեւի որ, համաճարա-

կին առջեւը կարելի չէ առնել՝ հիւանդներու մեկուսացումով եւ հականեխականներով. այդ բանը ձեռք բերելու համար պէտք է ջնջել մուկերը կամ արգիլել անոնց պաշտումը:

Պօպայի եւ ուրիշ քաղաքներու մէջ, 1898 ին, հականեխումի ամենախիստ միջոցներ գործ դրուեցան՝ մուկերու, բնակարաններու մէջ մուտքը արգիլելու. սակայն գոհացուցիչ հետեւանքներ չունեցան: Ոորհուեցաւ կատուններու, շուններու եւ խոզերու միջոցով անոնց ջնջումը փութացնել. բայց այդ բանն ալ վտանգաւոր լինելէ հետո չէր՝ համաճարակի պահուն. քանի որ ժանտախտի պատիւը պիտի սպաննէր այդ կենդանիներն եւս, ու, առկէ մեծ անտեղութիւններ պիտի ծագէին: Ինչպէս վերջին փորձերը ցոյց տուած են, շուները շատ տրամադիր չեն ժանտախտէն վարակուելու. սակայն զանոնք գործածելը՝ մուկերու դէմ, ինչպէս նաեւ զօրաւոր թթուներու՝ իբր կոտորիչ կիրարկուելը, սահմանափակ արդիւնքներ տուած լինելով եւ ձգուեցան:

Ուրիշ գիտնականներ խորհեցան մուկերը ջնջել, տարբեր վարակիչ հիւանդութիւններու սերմն անոնց մէջ ներմուծելով: Բայց այդ ալ անոնց ջնջումի վերջակէտը չկրցաւ դնել:

« ՀԱՄԱԼՍԱՐԱՆ » Ի ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԸ

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

Լեւոն Մեղիֆ-Աղաւեսեանցի՝

1. ԱՆԵՐԵՒՈՅԹ ՀՈՂԱԳՈՐԾ — Կարմիր—ձիճու — Փոխադրուած Ռուսերէնէ (1896 Թիֆլիզի շ. Հր. Ընկ.): 2. ԻԳՆԱՏԻՈՍ ԼՈՅՅՈՒԱ — Նրա կեանքը եւ Գործունէութիւնը — (1899 Թիֆլիս): 3. ԽԺՌՈՂՆԵՐ՝ Պրոֆ. Մօդէուս Բօդրանովի. ազգ. քարգանակ. (1897 Թ. Հ. Հր. Ընկ.): 4. ԵՐԿՈՒՎԷՊԻԿ — ա. վրէժ՝ Գի յը Մօպասանի, բ. Հիւանդապահ Աղջիկը՝ Ֆրանսուա Կօպպիի — Ֆրանսերէնէ քարգանակ. (1896 Թ. Հ. Հր. Ընկ.):

Բժիշկ Սիլեոն Շահ-Նազարեանցի՝

1. Մի քանի խրատներ ԴՊՐԱՆՈՅԻՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

(1899 Մոսկուա) : 2. ԵՐԵՒԱՆԻ Հ. Թ. Հ. ԴՊՐԱՆՈՑԸ եւ
ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, (1899 Մոսկուա) : 3. ՃԱՌ ԴՊՐԱ-
ՆՈՑԻՆ, ՆԵՐԿԱՅԱՆԱԼԻՍ, (1899 Մոսկուա) :

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ԱՆԵՐԵՒՈՅԹ ՀՈՂԱԳՈՐԾ

Այս փոքրիկ գրքոյկը, որ 47 էջերէ կը բաղկանայ, 1896/ի հրատարակութիւն մ'է թէեւ, սակայն կ'արժէ վրան քանի մը խօսք ըսել :

Շատ անգամ հրապարակի վրայ կը նետուին օտար ընդուներէ թարգմանութիւններ, որոնց նիւթը ո'չ միայն կապ չունի հայ ժողովուրդին կեանքին հետ ու անոր որ եւ է կերպով օգտակար չէ, այլ եւ կը վնասէ, շատ անգամներ, բարոյապէս : Աներեւոյք Հոյագործը՝ այդպիսի հրատարակութիւններու կարգէն չէ :

Ազատ թարգմանութեամբ կոկուած ու ամիսփուած այդ գրքոյկը, կը բացատրէ թէ ի՞նչպէս, յաճախ, երկրագործներու տգիտութիւնը կը վնասէ, նոյն իսկ, իրենց ճակատին քրտինքով վաստակած գործին : Չին ճանչնար այն հողը զոր կը մշակեն՝ չճանչնալով անոր մէջ թաղուած տարրերն եւ, հոն, ապրող կենդանիները : Աներեւոյք Հոյագործը, զոր Ռուսահայերը Կարմիր-ճիճու կ'անուանեն եւ Տաճկահայերը Գեհնի-Որդ, Կարմիր-Որդ (Ver de Terre) այս վերջիններու կարգէն է, զոր այդ գրքոյկը կ'ուզէ ճանչցնել տեսանելի հողագործին, մարդուն :

Գրքոյկին առաջին գլուխները՝ այդ որդին կազմութեան եւ զգայարաններու վրայ կը խօսին : Տարուին՝ այդ նիւթին բուն հեղինակը, յաջողած է հաստատել թէ՛ այդ որդերը բոլորովին զուրկ չեն տեսութեանէ՝ ցերեկը հողին տակ ու գիշերը, ազատ օդին մէջ, անոնց անցուցած կեանքէն

հետաքրքրուած՝ փորձեր ընելով: Մինչ մէկ կողմանէ ըլլորովին անտարբեր՝ ամենասուր ձայներու առջեւ, միւս կողմանէ խիստ զգայուն են շարժումներն իմանալու եւ խոյս տալու: Իրենց հոտառութիւնը զարգացած է մասամբ միայն: Հողին ամենախոր խաւերուն մէջ, իրենց հոտառութեամբը միայն, կը յաջողին պրպակելով գտնել պահուած կաղամբի, սոխի եւ ստեպղինի թերթեր՝ որոնք իրենց համեղ սնունդները կը կազմեն:

Աշխատելու եղանակին ալ բաւական հետաքրքրական է: Բերանով հողը կուլ կուտան եւ իշենց մտրմինի հակառակ կողմէն դուրս կը թափեն. եւ այսպէս, հեղհեղէ, գլուխնին հողին մէջ կը խորասուզի, ուր պէտք է շինեն իրենց բնակարանը: Այսպէս որ՝ երբ փորերնին լեցուի, դուրս կը սողան եւ կ'արտաբերեն կլլած հողերնին ու, աստիճանաբար, կը խորցնեն իրենց ըոյները: Այս աշխատութեան հետեւանքով է որ կը կազմուին յաճախ 5—8 սանդիմնութր բարձրութեամբ հողակոյտեր, զորս, սաէպ, անտարբեր աչքով կը դիտենք մեր բանջարանոցներուն մէջ:

Այս աշխատանքը հետաքրքրական ըլլալէ զատ, ունի գործնական կրկին օգտակարութիւն, որուն վրայ կը խօսուի գրքոյկին վերջին էջերուն մէջ, բան մը՝ որ անոր ամենէ չահեկան մասը կը կազմէ: Երբ կարմիր հողորդերը հողը կուլ կուտան եւ զայն կ'արտաթորեն, նախ երկրի ներքին խաւերը՝ արտաքիններու հետ հաղորդակցութեան կը գնեն. — Տարուին փորձով հաստատած է որ, ամեն հինգ տարին անգամ մը՝ մէկ ըթաչափ հաստութեամբ հողի շերտի մը կը հասնի այս կենդանիներու աշխատութեան արդիւնքը, երկիրի արտաքին մակերեւոյթին վրայ, որովհետեւ մէկ մեթր քառակուսի հողի վրայ ամենէ քիչը երեք հողորդ կայ —: Ուրեմն, մինչ լուծն ու գութանը առ առաւելն կէս մեթր միայն կրնան ակօսել հողը, մեր զարչատեսիլ ճճիները՝ զոր այնքան անգթութեամբ մեծաքանակ կ'սպաննենք, հինգ մեթր խորութեան տակէն դուրս կը բերեն ամենաբերրի հող: Եւ երկրորդ՝ հողը այսպէս վերի վայր չըջուելով՝ կը կորսնցնէ իր պնդութիւնը, կը փափկանայ ու մշակութեան

յարմար կը դառնայ :

Օգտակար համարեցինք ծանրանալ այս գրքոյկի պարունակութեան վրայ՝ ա) ծանօթացնել այդ նիւթը մեր ընթերցողներուն եւ հողագործներուն . այս վերջիններուն մանաւանդ , որ խիստ անտարբեր են այդ տեսակ շահեկան գիրքեր կարգալուծն մէջ . անտարբերութիւն մը՝ որ կը ծնի իրենց դիտական ամենատարրական ճշմարտութիւններու տգիտութիւնէն . բ) յիշեցնելու մեր թարգմանիչներու եւ հեղինակներու թէ՛ Հաւնալաւան իր բարոյական աջակցութիւնն երբէք չը պիտի զլանայ , երբ իրենց թարգմանութիւններն եւ երկերն ուղղակի առնչութիւն ունին հայ ժողովուրդի առօրեայ պահանջներուն եւ պէտքերուն հետ , եւ կը ծառային այս վերջիններու գիւրացումին եւ բարւոքումին :

Մ. Պ.

ԻԳՆԱՏԻՈՍ ԼՈՅՈԼԱ

« Իւրաքանչիւր անձն , որ իւր գործունէութեամբ ժամանակակիցների ուշադրութիւնը գրաւելով հասարակութեան կեանքի ընթացքի վրայ որ եւ է կերպով ներգործական դեր է խաղում , այդ անձը պէտք է որ իւր կենսագրութիւնն ունենայ : » — Այս խօսքերով կը սկսի Պ Լեւոն Մ. Ադամեան , իր վերջերս լոյս ընծայած փոքրիկ հատորը , որ ամբողջութեամբ նուիրուած է Իգ. Լոյսլայի մանրամասն կենսագրութեան ու հանրային գործունէութեան :

Լուսէրէն յետոյ , որ , իր յանդուգն ու խիզախ գործունէութեամբ միտքերը յեղաշրջելով , անդամանելի հարուածներ , տուաւ կաթոլիկ եկեղեցականութեան , ու նոյն իսկ սպառնաց հիմն ի վեր տապալել Հռոմի պապական գահը , տասն եւ վեցերորդ դարու ամենամեծ հերոսներէն մին կը հանդիսանայ Իգ. Լոյսլայ , որ , իր նախորդին հակառակ , իր երկաթէ կամքով , պաշտպան ու զօրաւիգ կ'ուզէ լինել այդ խարխուլ աթոռին , համոզուած լինելով՝ որ անոր (անուանական) հովանաւորութեան տակ միայն կարելի պիտի լինի իրեն՝ իրագործել իր կանխամտածած ծրագիրները :

Գիրքի առաջին հինգ գլուխներուն մէջ ամփոփուած է

Լոյսլայի կենսագրականը: Հոս, կը ներկայանայ, մեր առջև, յամառ կամքի ու անձնուէք գործունէութեան տիպար մը, որ, մտազբաժ գործն իրականացնելու համար, կը նուիրէ իր ամբողջ էութիւնը, ու, հակառակ իր անուսութեան, հակառակ իր թշնամիներու յարուցած բազմազան խոչընդոտներուն, ամէն տեղ երեսէ ձգուած, հալածուած, կը յաջողի, վերջապէս, հասնիլ իր բաղձացած նշնպատակին: — Հիմնել Յիսուսեան ընկերութիւնը, որ այսօր համաշխարհային անուն կը վայելէ:

Եթէ նկատի ունենանք միայն գործող մարդը՝ առանց գործին, ու անհատն՝ ինքն իր մէջ, մեր բոլոր հիացումին արժանանալու իրաւունք ունի Լոյսլայ, որովհետեւ կարող է կենդանի օրինակ լինել, իր անսասան կամքով, ընկերական կեանքի բոլոր գործիչներուն. բայց երբ «մարդը կ'անհետանայ ու գործերը միայն առիթ կուտան անոր վրայ խօսելու», ինչպէս կը գրէր Ալֆօնս Տօտէ, այն տեսն, անհատը կը ջնջուի, ու գործն է որ գնահատել կուտայ գործողի արժանիքը:

Ուրեմն, կը մնայ մեզ գիտնալ թէ ինչ էր Լոյսլայի տեսած գործը, եւ թէ ինչ տեսակ ազդեցութիւն ունեցած է այն, ամէն տեսակէտով, հանրութեան միտքին ու սիրտին վրայ:

Դիրքի վեցերորդ գլուխին մէջ, հեղինակը, մանրազնին կերպով կ'ուսումնասիրէ «Եզուիտական կարգի կանոնադրութիւնը որ այնքան ընդարձակ գրուածքների եւ խօսակցութիւնների նիւթ ու առարկայ է դարձած», առանց որոշ եզրակացութեան յանգելու՝ թէ ինչ գաղտնի նպատակներու կը ծառայէ այդ կանոնադրութեան վրայ հիմնուած կրօնական ընկերութիւն մը, որուն մաս կը կազմեն աշխարհական ամէն դասակարգի մարդիկ, — պրօֆեսօրներ, փաստաբաններ, բժիշկներ, թեթեւ ու ազատ վարքի տէր կանայք, եւայլն եւայլն, — ինչպէս կը թուէ հեղինակը, ու ամէն ժամանակ իսկական եզուիտներու տրամադրութեան տակ կը գտնուին, «համակրող կամ աշխարհական» անունին տակ, առանց շօշափելի կապ մ'ունենալ:

լու անոնց հետ : Միայն այսչափը յայտնի է որ, Յիսուսեանները, ժողովրդական բառով՝ Ճիզվիթները, տարածուած են աշխարհի ամէն կողմը, եւ, մասնաւորաբար, կը զբաղին մանուկներու կրթութեան գործով : Այդ կրթութիւնն ունի անշուշտ իր կողմակի օգուտները, որովհետեւ շատ մը տարաբախտ ընտանիքներու զաւակներ միջոց ու դիւրութիւն կ'ունենան զարգանալու . բայց թէ այդ կրթութիւնն ինչ տեսակ սկզբունքներու ու վարդապետութիւններու վրայ հիմնուած է, եւ թէ որքան կը համապատասխանէ ան, արդի ընկերական կեանքին ու միջավայրին, եւ հետեւաբար յառաջդիմութեան գործին, ստիպուած ենք յայտարարել, դիրքի հեղինակին հետ, թէ Լոյօլա « հիմնեց այն սարսափելի ընկերութիւնը, որ իւր ծագման օրից զարձաւ ու մնաց միշտ խաւարամտութեան ու փարիսեցիութեան երդուեալ պաշտպան, որ ուր միայն կարողացաւ ոտք դնել, ամեն տեղ եւս գժգոհութիւն յարուցեց եւ խռովութիւն սերմանելով բարոյական աւերակներ թիւը շատացրեց . մի ընկերութիւն՝ որ իւր եզուխտական զգուելի սկզբունքներով ամբողջ ժողովուրդներ ու հասարակութիւններ անբարոյականացրեց՝ ամեն վատ բան խրախուսելով, անազնիւներին օգնելով . . . » եւ այլն :

Եօթներորդ գլուխին մէջ, Պ. Լ. Մ. Ադ. կը նկարագրէ թէ ինչ վարպետ միջոցներով Լոյօլա Գեներալ ընտրուեցաւ, եւ թէ ինչ խորամանկութեամբ սկսաւ կառավարել իր հիմնած ընկերութիւնը : Վերջին գլուխին մէջ ցոյց տրուած է թէ ինչպէս, այս դարու սկիզբը, եզուխտները յաջողեցան մտնել Ռուսաստան, եւ հոն զիրենք հիւրընկալող կառավարութեան վստահութիւնը չարաչար գործածելով, 1820-ին, վերջնականապէս, դուրս վռնտուեցան, « իբրեւ անպայման վնասակար մարդիկ » : Բայց այդ բանն անշուշտ արգելք մը չէր որ անոնք, այս անգամ, աւելի մեծ թիւով, դիմակի տակ չխուժէին Ռուսաստանի սահմաններէն ներս, եւ չդրաւէին շատ զօրեղ դիրքեր :

• Գիրքին լեզուն, թէեւ ուսանայ, բայց շատ մօտ է տաճկահայերու աշխարհաբարին, եւ շատ պարզ ու դիւրա-

հասկանալի: Գինը (30 կոպ. 3 ղրշ.) աժան է, ու նիւթը կարգալու արժանի ու հեռաքրքիր: Ս.

Յ. Գ. Գիրքին վերջին թերթին վրայ, մեր ուշադրութիւնը գրաւեց հետեւեալ խօսքը. «Թիֆլիզի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնից մերժուած:» Մեզի բուրովին անյայտ են այդ մերժումի պատճառները. միայն կը զարմանանք որ Հր. Ընկերութիւնը, որուն նպատակը պէտք է լինի հրատարակել եւ տարածել ժողովրդային օգտակարութիւն ունեցող գիրքեր, մերժած է այս գիրքի հրատարակութիւնը: Շատ ցաւալի պիտի լինէր անշուշտ, եթէ անձնականութիւնը մատ ունեցած է ասոր մէջ:

ԴՊՐԱՆՈՅԻՍ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻՆ

Տեսուչ Պ. Սիմէօն Շահ-Նաղարեանցի երեք գրքոյկներու նիւթն է՝ Երեւանի Հայոց Թեմական դպրանոցը: Անոր անցեալն ու ներկան բաղդատելով՝ Պ. Տեսուչը Դըպրանոցը նախանձելի վիճակի մը մէջ չի գտներ այսօր: Ու կը գիմէ հասարակութեան որ, ինչպէս գիտէ պահանջել՝ նոյնպէս ալ իմանայ տալ: Պ. Շահ-Նաղարեանցի կը ձայնակցինք:

Բայց «Դպրանոցիս աշակերտներին» գրքոյկը՝ ամենէ ուշագրաւն է: Ինչպէս կը թուի Պ. Տեսուչին խօսքերէն եւ ժամանակին կովկասեան թերթերու գրածներէն, Դպրանոցի աշակերտներն ըմբոստութիւններ ցոյց տուած են այդ կրթական հաստատութեան մէջ: Եթէ աշակերտները՝ «գրսի ու ներսի ապուշների» խօսքին միակ ընկելով է որ, ինչպէս կ'ըսէ Պ. Շահ-Նաղարեան, կ'ըմբոստանան եւ, նոյն իսկ, կը լրբանան Դպրանոցի վարչական եւ ուսուցչական մարմիններու դէմ, մենք այդ բանին վրայ կը ցաւինք: Միւս կողմանէ, կրնանք հաւանականօրէն գուշակել որ, այդ ըմբոստութեան մէջ, լինելու է գիտակցութիւն եւ դժգոհութեան բանաւոր պատճառ մը, զոր փրոստուելու է, նոյն իսկ, Դպրանոցի կազմակերպութեան մէջ, որ չի կարողանար պէտք եղած չափով գոհացում տալ ընկերական արդի պահանջներուն: Ժամանակին հետ պէտք է փոխուին նաեւ մեր կրթական հաստատութիւններու ծրագիրները. որովհետեւ ժամանակն է որ կը յեղաշրջէ կրթու-

թիւնն ու, ընտկանաբար, մեր պատանիներու ապագան : եթէ Դպրանոցը թերի կողմեր ունի, ինչպէս որ Պ. Տե-
տուչը՝ ինքն ալ կը խոստովանի, ու իր նախանձելի բարձ-
րութեան մէջ չի գտնուիր, ատոր մէկ զլխաւոր պատճառն
ալ, ինչպէս մեզ կը թուի, անոր հին կազմակերպութիւն
մ'ունենալն է անշուշտ :

ԿԱՐԵՒՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

1. Ձիերը նսնձերու խայրածի՞նն դիմ պահպանելու միջոցը.
— Չանոնք լաւ կերպով խոզանակելէ՝ եւ մորթին փոշին
հանելէ յետոյ, ընկոյզի կամ ապսէնթի (օշինգը — բէլին—)
թարմ տերեւներով անոնց մարմինը չփելու է :

2. Գեսնախնձորն ալիւրոս դարձնել. — Եփելու ատեն
զայն ջուրին մէջ գնել այն միջոցին միայն՝ երբ, այս
վերջինը, եռալ սկսած է արդէն :

3. Մուրնի բիծերը բուրդեղին փափուկ եւ գունաւոր ապ-
րակներու յիւսիկն հանելու հասար. — Լուալ զանոնք հաւ-
կիթի զեզնուցով, որ հալուած է զաղջ ջուրի մէջ եւ որուն
վրայ քանի մը կաթիլ ալքօլ աւելցուած է : Բիծերը պիտի
անհետանան դիւրութեամբ եւ գոյնը չպիտի եղծանի :

4. Մակերեւ ազատելու միջոցը. — Վայրենի անանուխի
տերեւներ սփռել խոտի, ցորենի եւ այլ արմատներու շտե-
մարաններու պատերուն վրայ, ուր մուկի ծակեր առաջ
զալու երկիւղը կայ :

5. Կենդանիներու ոջիլները ջնջելու եղանակ. — Յաճախ ձի-
երը, եզները, եւ ուրիշ կենդանիներ կ'ոլլոտին. զանոնք
իրենց մակաբոյժներէն ազատելու համար, կենդանաբոյժ-
ներու հետեւեալ գրութիւնը լաւագոյն համարուած է :

Սմանի մը մէջ, հաւասար քանակութեամբ կտաւատի
իւղ (ձիւթ) եւ քարիւղ, լաւ մը իրարու հետ խառնելէ
վերջ, քսելու է բուրդէ լաթի կտորով մը, ոլլիլներու ճա-
րակած տեղերը. այս վերջինները՝ անմիջապէս կ'սպանե-
նուին : Կարելի է այս գործողութիւնը կրկնել մէկ քանի
օր վերջը՝ եւ յետոյ կենդանիներու մորթը մաքրել տաք
ջուրով եւ աճառով : Լաւագոյն միջոց մը համարուած է ա-
սիկա, որովհետեւ մազերը երբէք չեն վնասուիր եւ ոչ ալ
կը թափին :

6. Որքանձիի (Ֆիլոքսերա) ջնջուելու ազատեղով (մաղ-

տանոս) . — Այդպեան մը յաշոգած է իր խաղողի տունիկերը պահպանել միմիայն աղատքեղ մշակելով անոնց մէջտեղը, մինչ շատ մը գրացի այգիներ իրենց որթատունկերը զոհ կուտային որթածին: Ինչպէս այգեպանը կը յայտարարէ, աղատքեղի հոտը կը հեռայնէ կամ կը ջնջէ որթածրին: Ամեն մարդ գիտէ դարձեալ, որ աղատքեղը կը մընայ միշտ կանաչ եւ երբէք ենթակայ չէ վնասակար միջատներու յարձակումին. բան մը՝ որ անտարակոյս, իր ջնջիչ յատկութեան կը պարտի:

7. Հարկիսի կեղեւները. — Ամենքդ ալ, իբր անօգուտ բաներ կը նետէք զանոնք. սակայն մտիկ ըրէք թէ որքան օգտակար ծառայութիւններ կը մատուցանեն: — Մանրեցէք զանոնք փոշիի նման եւ խաննեցէք ձեր հորթերուն եւ քուռայններուն առած խոտին հետ: Երինջները սքանչելի կը դառնան, եւ քուռակներու մեծնալը զերծ կը լինի ամեն վտանգէ:

Մ Ա Տ Փ Է Ո Ս Մ Ա Մ Ո Ւ Ր Ե Ա Ն

Թէեւ քիչ մ'ուշ, Հարնայարանի խմբագրութիւնը, իր առաջին քայլէն իսկ, կը փութայ մասնակցիլ այն խնդակցութեան, որ արծարծեցաւ բազմաթիւ սրտերու մէջ, որոնք անկեղծ են ու կը սիրեն միշտ գնահատել արժանիքը. խնդակցութիւն՝ որ իրաւամբ ծագեցաւ հայ գրագէտ—հրատարակագիրներու մէկ վաստակաւոր նահապետին, ՄԱՏ-ԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆԻ, յորելեանի սօնուելէն:

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ իբր Հրատարակագիր եթէ չկարողացաւ խոշոր ծառայութիւններ մատուցանել, սակայն ան հաստատակամութիւնն ունեցաւ, հակառակ իր անձուկ վիճակին, գրեթէ զրկանքով, իր օգտակար ըլլալու իղձը՝ որոշ աստիճանի մը մէջ, իրականացնելու ձգտիլ: Ու այդ պահուն, ան կողմ միշտ անկեղծ, անաչտու. քիչ անգամ կը քոտ եւ միշտ խոհեմ. գնահատեց արժանաւորն եւ քաջալերեց սկսնակ գրիչները:

Իբր մատենագիր՝ ՄԱՄՈՒՐԵԱՆ միեւնոյն յաշոգութիւնն ունեցաւ. ու աւելի թարգմանեց քան թէ արտագրեց. այս վերջին պահուն երեւցաւ ներուն գասական միտք մը, միշտ օգտակարը, միշտ նորը փնտռող:

Կը շնորհաւորենք զինք եւ, բոլոր սրտով, կը մաղթենք իրեն երկար կեանք:

ԽՈՒՐ.

Մ Օ Ր Մ Ը Ն Ա Ի Ա Տ Ք Ը

ՎԻՊԱԿ

(Իրական Կեսակե)

Տուն մը, նահապետական պարզութեամբ շտկուած եւ կահաւորուած, բանիբուն եւ մաքրասէր տանտիկինի մը ներկայութիւնը կը յայտնէր: Առաւօտը արդէն բաւական յառաջացած էր եւ արեգակը միջօրէին կը մօտենար՝ տակաւին ո՛ր եւ է ոգեւորութիւն չէր տեսնուէր այս շէն յարկին տակ: Թոնիրը ծածկուած էր իր ամենօրեայ ծածկոցներով. տան բոլոր առարկաները իրենց սովորական սեղը կը մնային, եւ ոչինչ կը խանգարէր հոն տիրող խոր լռութիւնը:

Ժամը կէսօր զարկաւ՝ երբ տան դրան ծխնին խիստ մեղմօրէն իր վրայ դարձաւ եւ կին մը, փաթթուած սև վերարկուի մը մէջ, ներս մտաւ. դանդաղ քայլերով՝ տան մէկ անկիւնը յառաջացաւ, ուր դարանի մը մէջ իր վերարկուն զետեղելէ յետոյ՝ վարանոտ եւ ջղուտ շարժումներով, տան մէջ գտնուող միակ սենեակին գուռին մօտեցաւ:

Երբ մէկը զայն մօտէն դիտէր, պիտի կարգար անոր գէմքին վրայ դառնացած սիրտի մը եւ վշտարեկ իղձերութեամբ բոլոր հեռքերը: Կը դողար ան իր բոլոր մարմնով, ու իր վարանոտ վիճակին մէջ չունէր յանգնութիւն հրպելու այդ սենեակի գուռին որ թերեւս իր ետեւ կը ծածկեր սրտակեղեք տեսարան մը, ուրկէ կախուած ըլլար իր կենդանութիւնն ալ, գոյութիւնն ալ: Ան ընկճուած մայր մ'էր, այդ անշուք նահապետական տան տիրուէին, պատկառելի տանտիկինը:

Քարի սիրտի մը, հոգիի մը այդ պատկերացումը, սէրի մարմնացումը, ընտանիքի այդ հաւատարիմ պահպանիչը, այնքան ընկճած կ'երևէր, որ իր գէմքը բոլորովին դունաթափած էր: Երբեմնի մշտակայ ծիծաղի եւ հոգեկան գոհացումի տակ գրոշմուած իր գիմագիծերը— երբ ան, օր մը, այնքան ուրախութեամբ աղքատ մը կը կերակրէր, ուրիշ օր մը մերկ մը կը հագուեցնէր եւ երրորդ օր մը որբ մը կ'ուրախացնէր, — այդ պահուն սարսուռներու տակ կը դողգոյային, որ իր հոգիէն խորերէն կուգային, իր սիրտին յոյզերէն կը մագնիսանային: Ու այդ հոգեկան կըսիւն մէջ, ան կ'ուզէր, չհաւատալ թէ իրօք, այդ գուռը կը ծածկէր իրմէն՝ անհնարին գառնութիւն մը, ու իր

բոլոր ոյժերը ժողոված՝ ուղեց բանալ զայն, բայց տկարացաւ. Չերմաջերձ արտասուքներ հոսիլ սկսան իր սեւ աչքերէն, եւ իր այդ յուզուած վիճակին մէջ ինկաւ ան սեւ մին վրայ նուազած:

Հաղիւ քանի մը վայրկեան անցած էր, ու նուազած մայրը կը մնար անշարժ, սենեակին դուռը մեղմիկ մը բացուեցաւ, ու գեղանի օրիորդ մը՝ տոժոյն եւ դալկացած դէմքով, երեւցաւ հոն: Աղջիկն էր վշտաբեկ մօր, որ իր ոտքերու առջեւ փռուած էր:

— Մայր, մայր, գոչեց ան, խեղդուկ ձայնով մը խելայեղ. ու, տենդոտ եւ յանկարծական շարժումով մը, անոր վրայ ինկաւ. մօրը կարկամած չըթունքներու եւ կապուտցած աչքերու վրայ համբոյրներ զետեղեց, ու մըկրտեց զանոնք Չերմաջերձ արտասուքի աղի կայլակներով:

Մայրը սթափած՝ գտաւ իր բազուկներու մէջ աղջիկը ու իր առաջին խօսքն եղաւ.

— Ծաղիկ, զաւակս ի՞նչպէս է:

Ծաղիկ լուռ մնաց:

* Սթափած մայրը՝ գողգոջուն քայլերով իր զաւակին անկողինին մօտեցաւ, ու իր ծոցէն հանեց շղարչներու մէջ փաթթուած գիրք մը, զոր համբուրելէ յետոյ խնամով, անոր գլուխին վերեւ դրաւ: Արտասուելից ակնարկ մը ձգելով իր զաւակին վրայ համբուրեց զայն յուշիկ կերպով մը ու, ապա, տնական գործերը քիչ մը կարգադրելու ջանաց:

Բ

Անփառունակ սենեակի մը մէջ, լուսաւորուած երկու պատուհաններով, որ կը բացուէին ընդարձակ եւ հին ոճով շինուած տունի մը մուտքին վրայ, փռուած էր անկողին մը: Կին մը գիշերը անքուն անցնողի մը դէմքն ունէր՝ երբ անկողինին սնարէն իր գլուխը վեր առաւ, աչքերը՝ ուղղեց դէպի լուսամուտները ուրկէ մթնշաղ լոյս մը՝ արշալոյսը կը ծանուցանէր: Վեր ցատկեց մեքենաբար, ու արդէն սպառած կանթեղը վերցուց անկողինին մօտէն որ, գիշերն ի բուն, պլպլացած էր հոն պատէն կախուած դիեցիկ Սօսուածածնի պատկերին առջեւ: Համբոյր մը զետեղեց անոր վրայ ու, յուզուած, մեղմիկ խոնարհելով դէպի անկողինը՝ ձակատէն համբուրեց, հոն նիւրհող մանուկ մը, որ հաղիւ տասնեակ տարիներու գարունները տեսած էր: Նիւրհող դէմք մը եւ կապուտցած ակնակապիճներ՝ երբեմնի վարդագոյն այտերու եւ վառվռուն սեւորակ աչքերու փոխան, մանուկին մեռելական երեւոյթ մը կուտային: Սպիտակներու մէջ

փաթթուած գլուխը, կարծես կենդանութեան նշոյլ չէր ցոյց տար, եւ արեան կարմիր բիծեր ցոյց կուտային թէ, անիկա ծանր հիւանդութիւնէ մը կը տառապէր :

Մայրն էր որ անքուն կը հսկէր հոն, իր զաւակին վրայ, մայր մը՝ դժբաղդ եւ անմխիթար :

Ակնապիշ ոտքի վրայ՝ դիտեց ան իր զաւակը : Վայրկեաններ ու ժամեր պիտի սահէին եթէ եկեղեցիին կոչնակին մեղամաղձոտ ձայնը՝ գիշերային լուութեան մէջէն չզարդայն սթափել ու իրեն յիշեցնել, թէ պէտք էր պահիկ մը իր զաւակէն բաժնուիլ, ու երթալ հոն փնտռել իր մխիթարանքը, ուր միայն կ'ապաւինին բոլոր երկիւղած զոհերը՝ ինչպէս սէրի՝ նոյնպէս բաղդի եւ արկածի :

Հասուչսնք մը սրտին խորէն իր շրթունքներու վրայ մարեցաւ, ու ահամայ հեռացաւ այդ վշտի անկողինի մօտէն աջնտեղ, քիչ մը յետոյ, պաղած դիակ մը գտնելու երկելով : Ազմուկ չհանելու համար, ամենայն զոռչութեամբ ոտքին մատներուն վրայ քարելով՝ բացաւ կամացուկ մը դուռը եւ անցաւ ընդարձակ տան մէջ, որ միեւնոյն ատեն թէ ննջարան էր, թէ ձաշարան եւ թէ խոհանոց : Կովէ քով շարուած անկողիններու մէջէն սահելով մօտեցաւ անոնցմէ մէկին, ուր կը նիրհէր իր սիրասուն ալջիկը :

Աղջիկը՝ որ իր մօր հետ գիշերուան մեծ մասն անքուն անցուցած էր, խոր քունի մէջ թաղուած կ'երեւէր. բայց յաճախ ջրածգային շարժումներ իր այտերը վարդի նման կ'երանգէին ու իր շնչառութիւնը մերթ Բնդ մարթ կ'արագացնէին ու կ'ընդմիջէին : Ենդձ աղջիկը՝ իր եղբօր հիւանդագին վիճակէն ելեքարականացած, անոր սիրով կը տոչորէր իր քունին մէջ : Յանկարծ ոտու մով մը վեր ցատկեց, ձեքերն երկնցուց կողկողագին հռնդիւնով մը ու, հետեւեալ բռտերը՝ ընդմիջեալ ու անհասկանալի ձայնով մը, ըսաւ. «Մայրիկ, ես կ'ուզեմ որ եղբայրս առողջանայ :»

Այդ պահուն էր երբ խեղճ մայրը, անոր ձեռքերը համբուրեց եւ յուզուած սկսաւ լալ :

Աղջիկը՝ որ արգէն իր աչքերը բացած էր, մօր վիզը պլլուեցաւ՝ երբ ան բեկբեկեալ ձայնով մը պատուիրեց. «Մաղի՛կ, զաւակս, շուտ ըրէ հագուէ՛՝ ու նշանիկիս քով գնա վրան հսկելու համար՝ ես եկեղեցի պիտի երթամ. թերեւ Տէրը գիտմ մեր վրայ, ու մեզի անոր սեւ օրը տեսնելու չարժանացնէ :»

Քանի մը վայրկեան յետոյ, մայրը արգէն դուռը ելած էր : Հակառակ փետրուար ամիսի ցուրտին ու քամիին, իր

բոլոր մարմինը, անհանգիստ ջերմութեան մը մէջ կը գրտնուէր : Արշալոյսին հետ կենդանութիւնը վերսկսած էր փողոցներու մէջ : Հոս ու հոն մարդիկ արագ արագ կը քալէին. սպիտակավարուս ծերունիներ, համրիչը ձեռքերնին, «Տէր ողորմես՛» ըսելով եւ պառաւ կիներ, թանձր շալերու մէջ փաթթուած, քթերնուն տակէն «սաղմոսերգելով»՝ հազալով ու ընփաշով, իրենց բոլոր ոյժը կ'սպառէին գողգոջիւն քայլերնին արագացնելով՝ եւ վայրկեան մ'առաջ կճող ցուրտէն իրենց արդէն սառած մարմինն ազատելով՝ Աստուծոյ տունը հասնելու համար : Ու հէգ մայրն էր որ երբեմնի իր կատարած առաւօտեան աղօթքն ու աղաչանքը, որով իղձեր անթիւ ու անհամար դէպի էն կ'ուղղուէին, երկու խօսքի մէջ պարփակած էր. իր բոլոր փափաքն էր այն, ուրկէ կախուած էր իր երջանկութիւն. ու գողահար յաճախ կը կըրկնէր. «Ա՛ստուած իմ, կամ նշանիկիս խնայէ, կամ իմ հոգիս անկէ առաջ ա՛ն : »

Շարունակելի

ՄՈԿ—ՊԵՏ

Ֆ Ր Ա Ն Ս Ե Ր Է Ն Լ Ե Ջ Ո Ւ

ՆՈՑՆԱՀՆՁԻՒՆ ԲԱՌԵՐ

Նոյնանչիւն կը կոչուին այն բառեր որ միեւնոյն արտասանութիւնն ունին եւ, երբեմն ալ, միեւնոյն ուղղագրութիւնը, թէեւ իրենց նշանակութիւնները կը տարբերին :

ՀԱՄԱՌՕՏԱԿՐՈՒԹԻՒՆ

ազ արական, գոյական
իգ իգական, գոյական
ած ածական

դ գերանուն
ք բայ
ւք մակբայ

և նախադրութիւն
չ շարկապ
à ձայնարկութիւն
յ յօդ

ևն ներկայ ընդունելութ .
սը անցեալ ընդունելութ .
և հարցակոն
յգ յոգնակի

A

Aa ազ առուակ :
a ազ առուակ :
a առաջին տառ ա Ֆրանս .
այբենարանի :
a. as ք ունիս , ունի . avoir
բայէն , tu as , il a .
à և մէջ , ըստ , համար :
as [աս] ազ միաւոր թղթա-
խաղի [պիւրլի] :
ah! à օ'իս , ա'իս :
ha! à ա' , ա'յ :

Abbesse իգ մայրապետ
abbaisse-s ք կը ցածցնեմ , կը
ցածցնես եւն . abaisser
բայէն j'abbaisse , tu ab-
baisses , il abbaïsse .
abbaisse իգ նուրբ խմոր ,
զանգուած :
à Besse քաղաքի անուն .
Պէտի մէջ :

Acier ազ պողպատ :
à scier և ք սղոցելի , սղոցուե-
լիք :
assied ք կը նստեցնեմ , կը
նստեցնես եւն . asseoir
բայէն j'assied , tu assieds
il assied etc .

Acquit ազ ընկալարիւր :
acquis աը ստացած , ստա-
ցայ . acquérir բայէն :
à qui? և ո'րու .
acquit à caution ազ արտօ-

նագիր (ելեւմտական) :

Affaire իգ գործ , զբաղում :
à faire և ք կատարուելիք .
une chose— . — բան մը :
l'affaire յիգ գործը , զբաղումը
la faire ք ք զայն կատարել ,
ընել :
les affaires յգ իգ գործերը :

Air ազ օդ . կերպարանք .
երեւոյթ . եղանակ :
aire իգ կալ . մակերես(երկչ .) :
aire իգ բոյն (գիշակեր թըռ-
չուններու) :
erre իգ քալուածք . հետք :
ère իգ թուական , զարագլուխ
ers ազ բոյս (բանջարեղէն-
ներու տեսակ մը) :
r ազ Ֆրանս . ո տառ :
haire իգ մազէ շապիկ :
hère ազ աննշան մարդ :

Ail ազ սխտոր :
aïe! à ա'յ :
haï աը ատած . il a— , ատած
է , ատեց :
Haï հին քաղաք մը :
haïe! à սայլապանի աղաղակ

Aller ք երթալ :
allé աը գացած . je suis— ,
գացած եմ :
allée իգ ծառուղի , անցք :
allais ք կ'երթայի . aller բա-

յէն, j'allais, tu allais etc.
 allez բ կ'երթաք. գացէք (հը-
 րամ.). aller բայէն :
 hâler բ սեւցնել :
 haler բ շուն քշքշցնել, վա-
 զեցնել :

Amande իգ նուշ (պատէմ),
 կուտ :
 amende իգ ատգանք :
 s'amende բ կ'ազնուանայ,
 կը լաւնայ. amender ս—,
 բայէն. j'amende, tu a-
 mendes etc.

Anvers Անվեր (քաղաքի ա-
 նուն)
 envers ն դէպի
 en vers ոտանաւորով, բա-
 նաստեղծօրէն :
 en vert կանաչագոյն :
 en verre ապակեայ :

Ou շ կամ :
 où մ ուր :
 août ագ օգոստոս :
 houe իյ տեսակ մը բրիչ :

Appel ագ կոչ, հրաւեր :
 appel cour մ—, վերաքն-
 նիչ ատեան :
 appelle բ կը կանչէ. appeller
 բայէն. j'appelle, tu ap-
 pelles etc.

Au j կրճատում à եւ le ի :

aux j կրճատում à եւ les ի :
 eau իգ ջուր :
 os ագ ոսկոր :
 o! à օ', ո'վ :
 o ագ տառ օ :
 aux ագ j սխտորներ. յոգ-
 նակի ail բառին :
 haut ած բարձր :
 haut մք բարձր :
 oh! à օ', ո' :
 ho! à օ', է' j :

Are ագ միութիւն ֆրանս.
 դեռիններու չափին (1)
 քառակուսի մեթր :

Arts Ար, քաղաքի անուն :
 art ագ արուեստ :
 arrhes իգ յգ՝ գրաւ, առհա-
 լատչեայ, կանխավճար :
 hart իգ դէպի կապ. կախա-
 ղանի չուան :

Autan ագ հարաւային հողմ :
 autant մք այնքան :
 au temps ժամանակին :
 ôtant նը հանելով :
 oh! tant pis օ', այնքան վատ

Autel ագ խորան :
 hôtel ագ պանդոկ, հիւրանոց
 oh! tel ո'հ, այսինչ :

Auteur ագ հեղինակ :
 auteur ագ արարիչ :
 hauteur իգ բարձրութիւն :
 hotteur-euse ած կողովակիր :
 Շարունակելի

Le Gérant : CHARLES BEAULIEUX

Imprimerie de Lutèce, L. GIRARD, 102, Rue Monge. Paris

Թ Ղ Թ Ա Կ Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

Կ'իմացնենք մեր Ռուսաստանի եւ Ամերիկայի այն բա-
ժանորդներուն որ, արդէն կանխաւ, Հաւալաւարանի հրա-
տարակումէն առաջ, մեզ փոխանակ տարեկան 5-ի՝ 4 բուպ-
լի եւ վեցամսեայ 1 տոլար 20 սենդի՝ 1 տոլար, ղրկած են,
բացառաբար կանոնաւոր բաժանորդ պիտի նկատուին:

Ժընեվյ. ՍՍՄԻՆԱՍ. — Նոյեմբերն ալ անցա՛ւ. կը հար-
ցնենք. գեռ սպասե՛նք:

Կիպրոս (Նիքոսիա) ՕՐ. Յ. ԿԻԻՎԷՉԵԱՆ. — Հաճեցէք
Հաւալաւարանի մէկ օրինակը՝ այդ տեղի Հայ Որբանոցին
յանձնել:

Ադիֆասանդրիա ԺՈՂ. Գ. ԸՆԹԵՐՑՍՐԱՆ. — Կը ղրկուի:
Փարիզ Զ. — Մեզմէ անկախ պատճառներով զանց առ-
նուած է:

Մեզ բաժանորդ գրուիլ փափաքողներուն կը ծանուցա-
նենք, որ հաճին մեզ ուղարկել փութով Հաւալաւարանի բա-
ժանորդագիրը, եթէ կ'ուզեն երկրորդ թիւն իր օրին ըս-
տանալ:

Ս. առջին թիւը ստացողներէն կը խնդրենք որ բարե-
հաճին զայն մեզ վերադարձնել, եթէ չեն կամենար բաժա-
նորդագրուիլ:

Ա. գ. Դ

ՀԱՅԵՐԷՆ ՏՍՈՒԵՐՈՒ ԶՈՒԼԱՐԱՆ

Կը ձուլուին նաեւ տաճկական, եւրոպական եւ երբա-
յեցերէն տառեր:

M^r Agop Dzérounian, SOFIA [Bulgarie]

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Կը հրատարակուի ամիսը մէկ անգամ:

Իւրաքանչիւր թիւը պիտի ունենայ, առնուազն, 48 էջ:
Բաժնեգինը կԱՆՆԻԿ է.

| | Տարեկան | Վեցամսեայ |
|------------------------|---------------|------------|
| Ֆրանսա | 10 ֆր. | 5 ֆր. |
| Օտար երկիրներ. | 12 » | 6 » |
| Թուրքիա | (ողջ) 50 ղրշ. | 25 ղրշ. |
| Ռուսիա | 5 ռուպլի | 2 ռ. 50 կ. |
| Ամերիկա | 2 տոլար | 1 տ. 20 ս. |

Մէկ թիւիւ, ՖՐԱՆՍԱ, 1 ՖՐԱՆՔ

Նամակ եւ Գրութիւն ետ չեն տրուիր:

Կը սպագրուին, չափաւոր գրներով, ազգեր եւ յայտա-
բարութիւններ:

Խմբագրութեան՝ նամակ, յօդուած, դրամ, եւայլն, ղրկել՝

RÉDACTION du « HAMALSARAN »

3, Place Monge, 3

PARIS

Խմբագրութիւնը պատասխանատու չէ, իրեն ուղղուած
նամակներու համար որ սպահովագրուած չեն:

ՄԱՆՕԹ. — Տասը բաժանորդ գտնողին մէկ օրինակ Հա-
մալսարան ձրի կը տրուի:

Անոնք որ կը փափաքին բաժանորդագրուիլ, թող փո-
քան մեզ գիմել՝ եթէ կ'ուզեն Համալսարանը առաջին թի-
ւէն ունենալ:

Կը խնդրուի հայ լրագիրներու եւ պարբերական հանգէս-
ներու վարչութիւններէն, իրենց թերթը փոխանակել Հա-
մալսարանի հետ:

Imprimerie de Lutèce, L. GIRARD, 102, Rue Monge. Paris